

ՔԱՆԱԲԵՐ

Հոգեւոր Աստուծոյ Արեւոյն հաւար
PANPÈRE REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Journal des Eglises Evangéliques Arméniennes de France

7, Rue Papère, MARSEILLE

(ԺԱ. Տարի) ՄԱՐՏ 1935

(11^{me} Année) Mars 1935

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Ս. Գրքի Հայերէն Թարգմանութիւնը

Գ. Գ. Խ.

Հոգ. Կեանք

Բարի Հովիւը

Ուրիշներ կրնան դուռն չեւ կրնար

Շարժական անձնաքննութիւն

Թարգ. Զ. Բ. Պուտաքեան

Թարգ. Տ. Գարամանուկեան

Ա. Օ. Փափաեանդ

Կենաց ամուսնութիւն

Մարդասպանը եւ գիտունը

Ի՞նչ պէտք է հաւատալ

Թարգ. Ս. Պաքաւեան

Թարգ. Մ. Կ. Պարամեան

Սերտողութիւն

Կիրակոսեայ դասերու ներշնչութիւն

Կենսագրական

Ճոն Ուէսլի

Վ. Ս.

Պատանեաց

Տիպար գեմքեր

Թանկանց սիւնակ

Դրուագներ քոյր Ապիկայիւի կեանքէն

Ջանազան լուրեր

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերները մէկու ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնածերներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխորհուրդ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնորոշ Յշմարտութեան
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերներ երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտիի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողբէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատր. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիւրտութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտուն վերատիւն ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելին Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանի իկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ զրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN


7, Rue Papère

MARSEILLE (France)

Ֆրանսայէ դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

ԲԱՆՔԵՐ

Արժեքի՛ր դուռն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելուն
ընէ, ու Քրիստոս
քեզի ըզս պիտի
տայ:
Եփես. Ե. 14



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մանկու խոստումնքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Քանզի ալ առ-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԱ. ՏԱՐԻ

Վերջ - ՄԱՐՏ 1935

ԹԻԻ Թ 2-3

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԳՐԲԻ ՀԱՅՆԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆ ՈՒԹԻՒՆԸ

1934ին լրացաւ Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան 1500 ամեակը: 15 դարերէ ի վեր հայը Ս. Գրքը ունի իր մայրենի լեզուով: Աստուածային ի՛նչ մեծ շնորհ:

Գնահատելով այդ դէպքին կարեւորութիւնը, ամենայն Հայոց Հայրապետը յորելեան տարի հռչակած է 1935ը:

Արդ, ժամանակն է որ մենք ալ «Բանբեր»ի ընթերցողներու ուշադրութեանը յանձնենք այն մեծ դերը, զոր ունեցած է Ս. Գրքի թարգմանութիւնը մեր ազգին համար:

Նախ՝ ան առիթ տուած է հայկական տառերու գիւտին: Մինչեւ 406 մենք մեզի սեփական տառեր չունէինք: Անոնց պէտքը կը զգացուէր շատերու կողմէն: Ոմանք նոյնիսկ փորձած էին բան մը յարմարցնել: Ասոր ապացոյց է Եղեսիոյ ասորի եպիսկոպոսին, Դանիէլի քով գտնուած եւ հայկական կոչուած ձայնանիշերու գոյութիւնը: Բայց փորձը անյաջող անցած էր:

Սբ. Մեսրոպ Մաշտոցն էր որ յաջողեցաւ լուծել այդ հարցը, եւ զայն այդ ձեռնարկին մը-զողն եղաւ Ս. Գրքը հայերէնի թարգմանելու բաղձանքը:

Անիկա կը գտնուէր Գողթն դաւառը, հայ ժողովրդական երգիչներու, գուսաններու հայրենիքը, ուր դեռ հեթանոսութեան խոր խաւարը կը տիրէր եւ ուր հազիւ ազօտ ճառագայթ մը թափանցած էր Լուսոյ կրօնէն, քրիստոնէութենէն: Մեսրոպ հոն կը քարոզէր խաչեալ ու յարուցեալ Քրիստոսը եւ կը ջանար իր սիրեցեալ ազգին զաւակները առաջնորդել Անոր ու ժառանգակ'ց դարձնել երկինքի թագաւորութեան թանկազին մարգարիտին: Սակայն աւա՛ղ, Գողթնի ժողովուրդը դեռ չէին գնահատեր այդ գոհարին

արժէքը: Ուստի անոնք Մեսրոպի միսիոնարական գործունէութեան դէմ գաղտնի, յաճախ նաեւ յայտնի դիմադրութիւն կը ցուցնէին: Մեսրոպի սրատես միտքը շուտով թափանցեց այս ընթացքի գաղտնիքին, հայը իր լեզուով Ս. Գրքը չունէր: Աւետարանը կը լսէր լուսարէն կամ լատերէն լեզուով. բնական էր որ այդ պայմաններուն տակ միայն ծանծաղ, մակերեսային ըմբռնում մը պիտի ունենար անոր սուրբ ու սիրազեղ պատգամներուն նկատմամբ եւ Հպիտի կրնար ենթարկուիլ անոնց:

Ուստի Մեսրոպ գաղափարն յղացաւ՝ գտնել հայկական տառեր եւ իր մայրենի լեզուին թարգմանել Աստուածաշունչը: Վեհ էր այդ խորհուրդը, բայց դժուար՝ անոր իրագործումը: Սակայն քրիստոնէական հաւատքն ու սէրը Մեսրոպի մտքին կուտային արծուային սրատեսութիւն եւ կամքին՝ պողպատեայ ամրութիւն: Ուստի ան գործի սկսաւ:

Մեր երկնաւոր Հօր նախախնամութեամբ հայոց թագաւորական զահուն վրայ կը բազմէր լուրջ, հայրենասէր եւ իմաստուն արքայ մը՝ Վրդաւշապուհ, եւ կաթողիկոսական ցուպը կը կըրէր Սահակ Պարթեւի նման տաղանդաւոր եւ կրօնական ու հայրենասիրական խոր զգացման տէր անձ մը: Անոնց հովանաւորութեամբ եւ նիւթական ու բարոյական օժանդակութեամբ՝ Մեսրոպ ճամբորդեց Եղեսիա, Սամոսատ եւ ուրիշ քաղաքներ, խորհրդակցեցաւ Դանիէլ եպիսկոպոսին ու յոյն գեղապիր Հոռեանոսին հետ եւ անոնցմէ ստացաւ թանկագին խորհուրդներ: Սակայն գլխաւոր դժուարութիւնը ինքը հարթելու էր. — պէտք էր որ ինքը անձամբ վերլուծէր հայերէն բառերը, ճշդէր հայերէնի սեփական բո-

լոր ձայները եւ անոնց յարմարցնէր ձայնանիշներ՝ օգտուելով յունական եւ ասորական տառերէն:

Ուստի առանձնացաւ եւ ծոմապահութեամբ մտածեց եւ աղօթեց, մինչեւ որ յաջողեցաւ կազմել հայկական տառերը: Պատմագիրը մեզի կ'աւանդէ թէ Աստուած ալ ուղղակի օգնութեան հասաւ Մեսրոպի՝ իր այդ կարեւոր գործին մէջ մասնաւոր տեսիլքով մը: — լուսեղէն ձեռք մը պատին վրայ գրեց անոր փնտռած ձայնանիշերը:

Նոյնիսկ ներկայ ժամանակիս մէջ տեսիլքի այնպիսի ստոյգ դէպքեր կան որ մենք չենք տարակուսիր մեր պատմիչին աւանդածին ստուգութեանը: Գէթ Այսքանը կրնանք հաստատապէս ըսել թէ Մեսրոպի միտքը իր պրպտումներուն մէջ աստուածային ներշնչումով, յայտնութիւնով այնպէս լուսաւորուեցաւ որ անիկա շատ իրաւամբ նկատեց տառերու զիւտը իբր պարզեւ մը՝ ուղղակի Աստուծոյ տրուած:

Մեսրոպ իր յօրինած տառերով փորձեց գրել խօսք մը. — «Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն է»: Փորձը յաջող էր: Այսպէս զատորոշուած էին մեր լեզուին բոլոր ձայները եւ յօրինուած անոնց ձայնանիշները, եւ այնքան կատարեալ որ անոնցով կրնան դիւրաւ ու ճշգորէն արտայայտուիլ եւ գրուիլ ոչ թէ միայն հայերէն, հապա նաեւ շատ մը օտար լեզուներու բառերը:

Եւ այս կարեւոր գործին, գրերուն գիւտին պատճառն էր Ս. Գրքը հայերէն թարգմանելուն բաղձանքը, որ Մեսրոպը մղեց երկար ու տաժանելի ճամբորդութեանց, անխնայ աշխատանքի ու մտածման եւ եռանդուն աղօթքի՝ մինչեւ որ կազմեց հայկ. «Այբ բէն»ը եւ ատով ճամբան հարթեց դէպի իր վսեմ նպատակը:

Երկրորդ Ս. Գրքի հայերէնի թարգմանութիւնը պատճառ եղաւ նաեւ հայերէն գրական լեզուի մշակման ու զարգացման: Շիտակ է թէ Աստուածաշունչի թարգմանութենէն առաջ մենք ունէինք մեհհնագրութիւն եւ դիւանագրութիւն, որոնք կը գրուէին պարսկական ու յունական տառերով, բայց հայերէն լեզուով: Շիտակ է թէ մենք ունէինք անյիւր բանահիւսութիւն, օրինակ Գողթան երգերը, որոնց մնացորդները մեզի նուրբ արուեստ մը կը մատնանշեն: Այսուհանդերձ հայերէնը իր ոսկեդարուն բարձունքին հասնելու գրական այլազան սեռերու արտայայտութեանը յարմարելու համար՝ պէտք ունէր անխոնջ աշխատանքի եւ լուրջ մտածման:

Եւ այդ ծանր գործը կատարեցին Սահակ կաթողիկոսն ու Մեսրոպ Մաշտոց եւ իր աշակերտ-

ները: Անոնք ամէն ալ քաջահմուտ էին յոյն լեզուին եւ զրականութեան եւ անով նրբացուցած իրենց գրական ճաշակը: Ուստի կ'ցին մըշակել ու մեզի աւանդել հայերէն գրական գեղեցիկ լեզու մը: Հայերէն բազմաթիւ դաւառաբարբառներուն մէջէն ընտրեցին Արարատեան կամ Ոստանիկ ըսուածը, որ հայ արքունիքին մէջ գործածուած լեզուն էր: Զայն ճոխացուցին ուրիշ դաւառաբարբառներէ առնուած բառերով: Բարդ ու ածանց բառեր կազմելու համար հայերէնի ունեցած մասնաւոր ճկունութիւնը նկատի առին եւ կազմեցին նոր բառեր՝ յաճախ թարգմանելով յունարէն բառերը հայերէնի: Այսպէսով մաքրագործեցին, ճոխացուցին եւ գրական գեղեցիկ լեզուի մը բարձրութեան հասցուցին հայերէն լեզուն: Այսպէս ընելու մղեց, ստիպեց զանոնք Ս. Գրքը, քանզի անիկա ոչ թէ միայն իր պարունակութեամբ, հապա նաեւ իր արուեստով գրական ամենէն ընտիր երկն է, որ հակառակ իր փոքր ծաւալին՝ իր մէջ կը պարունակէ զբոլոր գրական սեռերն ալ, ուստի կրնայ ճշգորէն թարգմանուիլ միայն այն լեզուով, որ ճոխ է եւ կիրթ ու բարձր ճաշակ ու արուեստ ունի:

Ահա, այդպիսի ճոխ ու գեղեցիկ հայերէն լեզու մը կերտեցին Սահակ ու Մեսրոպ եւ իրենց աշակերտները, — երիտասարդ թարգմանիչները. լեզու մը սրով անոնք կրցին թարգմանել Աստուածաշունչը այնքան գեղեցիկ, այնքան հարգատ որ մեր թարգմանութիւնը իրաւամբ կոչուած է «Փաղուհի թարգմանութեանց»: Լեզու մը որով մեծ յաջողութեամբ թարգմանուած են նաեւ շատ մը համաշխարհային արժէք ունեցող գրական գլուխ-գործոցներ: Լեզու մը վերջապէս, որ բառերու եւ բացատրութիւններու մեծ հարստութիւն ունի՝ արտայայտելու մեր կրօնական ըզգացումները: Գերման բարեկամներէս մին, — լեզուաբան մը, որ քաջահմուտ է լատին, յոյն եւ ֆրանս. գրականութեանց, եւ որ հաւասար ճկունութեամբ կրնայ քարոզել գերմաներէն, անգլիարէն ու հայերէն լեզուներով, ինծի ըսած է քանիցս թէ իր կրօնական զգացումները կրնայ աւելի դիւրութեամբ արտայայտել հայերէնով քան թէ իր մայրենի լեզուով:

Եւ մեր թարգմանիչները կրցին կերտել մեր սքանչելի լեզուն, քանզի անոնք Սուրբ Գրոց թարգմանութիւնը կը նկատէին աստուածային գործ մը, ուստի կը խորհէին, կը պրպտէին, կը թարգմանէին, ու կը սրբազրէին՝ աղօթքով իրենց Տէրով առաջնորդութիւնը ապահովելէ ետք:

Ինչպէս հայ գրի գիւտը, նոյնպէս նաեւ հայ լեզուի կերտումը պատուոյն է մէկ կողմէն մարդկային տաղանդի եւ անխոնջ աշխատանքի, իսկ միւս կողմէ աստուածային օրհնութեան: Ահա, այդ աչքով կը դիտէին իրենց գործը մեր ազգի այս մեծ զաւակներն ու բարերարները: Ով որ տարբեր կերպով կը դիտէր զայն ու միայն մարդը կը տեսնէ եւ ոչ նաեւ զԱստուած, զեռլման չէ հասկցած Սահակն ու Մեսրոպը, որոնց համար Քրիստոս էր ամէն բան եւ իրենք միայն գործիք Անոր ձեռքին մէջ:

Սակայն զեռ հոս չվերջանար Ս. Գրոց հայերէն թարգմանութեան դերը մեր ազգին համար: Պէտք է յիշենք զեռ երկու հատ ալ:

Երրորդ՝ Ս. Գրոց թարգմանութեան ծնունդ առաւ նաեւ մեր սեփական գրականութիւնը: Մեր թարգմանիչները ներշնչուած Աստուածաշունչէն՝ նախ հայերէնի թարգմանեցին շատ մը յոյն ու ասորի եկեղեցական հայերերու եւ աստուածաբաններու երկերը եւ ապա իբր հեղինակ արտադրեցին նաեւ իրենց սեփական գործերը: Եղիշէն գրեց իր Վարդանանց Պատմութիւնը, որ թէ՛ պատմական եւ թէ՛ դիւցազնական երկ մըն է, Եզնիկ հեղինակեց իր «Եղծ Աղանդուցը», որ մեծ կարեւորութիւն ունի թէ՛ իբր աստուածաբանական եւ թէ՛ իբր իմաստասիրական գործ: Ուրիշներ ալ տուին մեզի շարականները, որոնցմէ ոմանք բանաստեղծական գոհարներ են: Այսպէս մշակուեցան գրեթէ բոլոր գրական սեռերն ալ եւ այնքան մաքուր, ճշիւ ու գեղեցիկ հայերէնով որ շատ իրաւամբ մեր գրականութեան «ուկեղարը» կոչուած է այդ հինգերորդ դարը:

Չորրորդ՝ շնորհիւ հայերէնի վերածուած Ս. Գրքին ու անկէ ծնած հայ գրականութեան, որ կրօնական զգացմանց հարուստ գանձարան մըն է, հայը ճանչցաւ քրիստոնէութեան արժէքը եւ անոր զօղուեցաւ ամրապէս: Առանց Սբ. Գրքի թարգմանութեան անիկա չպիտի կրնար արմատանալ մեր մէջ եւ Պարսից հետ մենք ալ Խալիֆի պիտի յարէինք: Այո, նոյնիսկ մեր ազգութիւնը պիտի կորսնցնէինք, քանզի մեր աշխարհագրական բացառիկ դիրքը մեզ բացառիկ դժուարութիւններու կ'ենթարկէր, որոնց դիմաւորու տակոնութիւնն ու անձնութիւնը մեզի արուեցաւ մեր քրիստոնէական կրօնէն:

Յարգա՛նք Սահակի եւ Մեսրոպի եւ երկրպագութիւն մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Որ հաճեցաւ մեր այդ բարերարներուն միջոցաւ տալ մեզի Ս. Գրքը եւ 15 դարեր ետքը հասցնել մեզի բազում մարտիրոսներու արեան զնով: Գ. Գ. Խ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ԲԱՐԻ ՀՈՎԻԻԸ

Dr. F. B. MEYER

Յովհ. Ժ. 3-4

○○○○○

Պատկերը փոխ առնուած է լեռնային հովիտի մը մէկ անկիւնը պահուած փարախէ մը, ուր հօտը գիշերուայ պահերուն հանգչած է, աւազակներէն պաշտպանուած ըլլալով հսկող հովիւէն (ղոնապան), մինչ շրջափակը գիրենք կ'ապահովէր գայիւրէն:

Ի վերջոյ առաւօտը կուգայ իր հետը բերելով հովիւը որ դրան կը մօտենայ: Դոնապանը կը ճանչնայ անոր քայլափոխին աղմուկը, անոր ձայնը, դրան տուած բախումը, ու դուռը կը բանայ անոր առանց բռնի մ'իսկ վարանելու:

Նոյնիսկ ոչխարները, որ աւելի դիւրանաաց եւ իմաստուն են քան հիւսիսային կլիմայիները, որոշ նշաններ կուտան թէ իրենք ալ գիտեն թէ ճշմարիտ հովիւը եկած է, զի «Անոր ձայնը կը լսեն»:

Ապա հովիւը կ'սկսի զանոնք իրենց անուններովը դուրս կանչել, վասնզի իւրաքանչիւրը մասնաւոր անուն մը ունի, յաճախ թելադրուած մարմնոյն տնկութեան կամ կերպարանքին մասնաւոր մէկ երեւոյթէն: Եւ մինչ նա կ'անուանէ, կանչուողը հպարտանալով որ ուշադրութեան առարկայ է, յաճախ կուգայ եռանդով, խուճապող բազմութեան մէջէն եւ դուրս կ'ելլէ փարախէն, ուր հովիւը գինք կ'ապասէ շրջափակող պատերէն դուրս: «Իր ոչխարները անունովն կը կանչէ եւ դուրս կը հանէ զանոնք»:

Այսպէս ի վերջոյ բոլոր հօտը դուրս կ'ելլէ փարախէն եւ կը կենայ հոն այդ ամայի լեռնական անցքին մէջ, մինչ մշտնջենապէս լռակեաց մացառապատ ու վայրի գազաններու ժամադրավայր բլուրներու մեծդի կերպարանքները կը ցցուին չորս կողմէն:

Երբ այսպէս հովիւը իր ոչխարները դուրս հանած է, «անոնց առջեւ կ'երթայ, ու ոչխարները իր ետեւէն կ'երթան, վասնզի Անոր ձայնը կը ճանչնան, սակայն օտարի ետեւէ չեն երթար, հապա անկէ կը փախչին, վասնզի օտարներուն ձայնը չեն ճանչնար»: Կ'ըսուի թէ Արեւելքի մէջ մինչեւ հիմա ոչխարներու սեփականութեան վը-

րայ եղած վէճերը այսպէս կը լուծուին, երամակը կը տարուի դաշտի մը մէջտեղը եւ մրցակից պահանջողները կը կաշին զանոնք երկու հակառակ ուղղութիւններէ, հաստատ գիտցուած իրողութիւն մը ըլլալով թէ, ոչխար մը միշտ դաշտին այն կողմը պիտի վազէ, ուր կայնած է իր բուն հովիւը:

Տէրը մեզի հետ ունեցած վարուելակերպին մէջ գերընտիր առակը կայ այս բոլորին մէջ:

Ո՞վ է այն որ բան մը չգիտեր փարախին պաշտպանութենէն ու հանգիստէն: Այն տունը, բոլոր իր հանգարտ եւ երջանիկ ընկերութիւնով, զործը, զոր այնքան երկար ատենէ ի վեր կը վարենք որ անոր պարտականութիւնները տեսակ մը երկրորդ բնութիւն եղած են, այն ձեռնհասութիւնը որ թէպէտ դժուարաւ շահուած, բայց որ բաւական լայն է տարիներու հանգիստը խոտանալու համար, այս բոլորը օրինակներ են այն պաշտպան փարախներուն, ուր կը հանդէսինք: Փարախին չորս դին բուսնող խոտը շուտ կը կրծուի, ու դիւրաւ կ'անհետի անընդհատ կոխկոտուելով, ուստի բոլորովին ալ կը տարբերի այն կանանչէն, որ ցօղով օծուն կը պատէ սարալանջքը: Ուստի վերջապէս ճշմարիտ հովիւը կողայ զմեզ փարախէն դուրս հանելով տանելու հոն՝ ուր լեռնային թարմ ու պայծառ մթնոլորտին մէջ զեփիւռը առատօրէն կ'անցնի եւ կեանքը պերճանք մըն է բերկրապատար օգին մէջ: Անօրեայ փորձառութեան խնդիր մ'է այս: Թոյլ կը տրուի որ փոփոխութիւններ կրկին եւ կրկին անցնին մեր կեանքերուն վրայէն, որոնք կը խորտակեն մեր տուները, կը քանդեն մեր բոյները, կը ջախջախեն մեր ծրարները ու զմեզ կը մղեն դէպի նոր ու անծանօթ փորձառութեանց որոնցմէ այնքան կը վախնանք: Սակայն այս բոլոր փոփոխութեանց մէջ միշտ Բարի հովիւին անձնական ներկայութիւնը եւ վերին հսկողութիւնը կայ, Անորը, որ բնաւ չքնանար ու չմրափեր:

«Իր ոչխարները իրենց անուկնովնին կը կանչէ»:

Ահա անձնաքննութեան հարցում մը իւրաքանչիւրիս համար: Արդեօք ես իր ոչխարներէն մի՞ն եմ: Վասնզի եթէ այս հարցին կարելի ըլլայ դրապէս, հաստատական պատասխանել, օրհնութեանց անպատմելի եւ անկշռելի բաժին մը կը պարունակէ:

Հօրը կողմանէ Անոր տրուած յաւիտենական դարէրու ընթացքին, գայլէն ազատուած, հովիւին կեանքին գնովը, օժտուած յաւիտենական կեանքով, այնպէս որ ալ չեն կրնար կորսուիլ և ապա-

հով Յիսուսի պահապան ձեռքին խոռոչին մէջ: Ո՛չ մարդ, ոչ դեւ կրնայ զանոնք յափշտակել, մտերմօրէն ճանչցուած Անկէ, որ անպատմելի սիրով կը սիրէ, ու առաջնորդուած հանգստեան կամ զործունէութեան: Ո՛չ մէկ մահկանացու լեզու կրնայ պատմել, կամ մարդկային միտք երեւակայել այն բոլորը զոր Յիսուս է կամ կ'ընէ անոնց զորս կը կոչէ «Իր ոչխարները»: Բայց սա որոշ եւ անսխալելի է թէ Բարի հովիւը մեզ բոլորս ալ մտերմօրէն եւ անհատապէս գիտէ: Ան մեզ «մեր անուկնովը» կը ճանչնայ:

Անպատի թափառումներու ընթացքին Ամենակարող Աստուածը Մովսէսի խօսքեր ուղղած է որք միշտ ինծի այնպէս թուած են թէ շատ աւելի ծանրակշիռ նշանակութիւն մը ունին քան ինչ որ կ'երևի մակերեսովին վրայ: «Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, այս բանն ալ պիտի ընեմ, զոր զուն ըսիր, վասնզի Իմ առջեւ շնորհք գտար ու ես քեզ քու անուկնովը կը ճանչնամ»: Այս բառերուն մէջ իմաստի խորութիւն մը կայ որ կարելի չէ արտայայտել, բայց միայն կ'ըմբռնուի այն երջանիկ հոգիէն, որուն ուղղուած են: Ի՛նչ մտերմութիւն, ի՛նչ ընտանութիւն, ի՛նչ աստիճան, ի՛նչ փառք: Միայն բարեկամ մը կրնայ իր ընկերը անուկնովը կանչել, եւ ի՛նչ ըլլալու չէ նոյնիսկ Աստուածութեան բարեկամը ըլլալը: Տակաւին, այս բոլորը ապահովուած է մեզմէ ոեւէ մէկուն համար զոր Յիսուս կը ճանչնայ եւ անուկնովը կը կանչէ:

Մարգարէն աստղերու մեծ զօրքը, անջրպետի դաշտերուն մէջ ցրուած ոչխարի հօտի մը կը նմանացընէ:

«Աչքերնիդ վեր վերցուցէք ու նայեցէք, աս սոնք ո՞վ ստեղծեց»:

«Անիկա անոնց զօրքը համբանքով կը հանէ, Անոնց ամէնը իրենց անուկնովը կը կանչէ»:

«Իր մեծ իշխանութիւնովը եւ սաստիկ զօրութիւնովը անոնցմէ բնաւ մէկը ետ չմնար» (Եսայ. Խ. 26):

Բայց անտարակոյս անհատ մը, որուն համար Քրիստոս մեռաւ, շա՛տ աւելի կ'արժէ Իրեն քան երկինքի բոլոր զօրքերը: Եւ եթէ աստղերը այնքան ապահով են, վասնզի Ան պատասխանատու է պահելու եւ առաջնորդելու զանոնք, ինչո՞ւ մենք ալ հաւաստաբապէս ապահով չըլլանք քանի որ մեզ ալ անուկնով կը կանչէ: Արդեօք Նա մեզի հետ այսքան մտերմ յարաբերութեան մը մէջ պիտի մտնէ՞ր, եթէ անոր ելք—վախճանը մշտնջենական միացում մը չըլլար:

Իրական ոչխարներուն համար ուրիշ նշան մը

կայ: Անոնք կը Ֆանչնան իր ծայնը: Անոնք կըր-
նան իր քաղցը շեշտերը զանազանել ուրիշ ձա-
յներէն, եւ լսել հնազանդիլ է, «զանոնք դուրս կը
հանէ, (կ'առաջնորդէ)»: Այնպէս կ'ըսուի թէ եր-
կինքի մէջ Նա փրկեալները իբր հօտ մը պի-
տի կերակրէ ու զանոնք պիտի առաջնորդէ կեն-
դանի ջուրի աղբիւրներուն, այսինքն մէկ աղ-
բիւրէն միւսը, խոր, աւելի խոր, երկինքի սրտին
մէջ: Սակայն այս շնորհալի պաշտօնը հաւասա-
րապէս երկրի վրայ ալ իր գործն է: Նա միշտ ըզ-
մեզ առաջնորդելու վրայ է. հինէն դուրս դէպի
հորը, դուրս, ծանօթէն դէպի չփորձուածը, մեր
հասածէն դուրս ձեռք չբերուածին, դուրս մեզի
ընտանի փորձառութիւններէն ու խոստովանու-
թիւններէն քրիստոնէական կեանքին փառաւոր
կարելիութեանց: Այս առաջնորդութիւնները շատ
մը փափկիկ եւ զուրգուրտ եղանակներով կու-
զան: Պարագաներով, բարեկամութեամբ, զրքե-
րով եւ Սբ. Գրոց համարներով, եւ երբ ասոնք
զան, միշտ լաւ պիտի վարձատրեն զմեզ թէ որ
հնազանդիք ու հետեւինք: Օրհնեալ կեանքի
փորձառութիւն մը չկայ որուն Յիսուս չուզէ ա-
ռաջնորդել մեզ:

«Իր ոչ խաբուերը կը հանէ»: Ա՛հ, այս դառն
բան մըն է իրեն հաւանքի համար: Դառն է մեզի
երթալը, բայց հաւատարապէս իրեն ալ դառն է
մեզ ցաւցնելը: Այսու ամենայնիւ տակաւին
պէտք է որ այս ըլլայ: Մեր իսկական բարեկա-
մութեան նպաստաւոր չպիտի ըլլար միշտ նոյն
երջանիկ եւ հանգստաւէտ վիճակին մէջ մնալը:
Բոյնը կը քանդուի որ մատաղ նորափետուր
թռչնիկները ստիպուին իրենց թեւերը փորձել
եւ թռչիլ սորվին: Փարախը կը լքուի, որ ոչխար-
ները կարենան շրջիլ լեռան կազդուրիչ զառի-
թափներուն վրայ: Պէտք է որ մշակները հրուին,
մտցուին հունձքին մէջ, եթէ ոչ ոսկեզօծ հատիկ-
ները կը փճանան: Սիրտ առէ՛ք, մնալը նախա-
մեծար չէր կրնար ըլլալ, երբ Ան այլապէս տը-
նօրինած է: Եւ եթէ մեր Տէրոջ սիրազեղ ձեռքը
զմեզ դուրս կը հանէ, բա՛րի է: Յառա՛ջ իր անու-
նովը դէպի կանանչ արօտներն, հանդարտ ջու-
րերը եւ լեռանց բարձունքները:

«Անոնց առջեւէն կ'երթայ»: Ինչ բան որ մեզի
կ'պատէ, նախ իր կողմէն դիմագրաւուած է:
Իւրաքանչիւր դժուարութիւն ու բարդութիւն, բո-
լոր վայրի զազաններն ու աւելի վայրի աւազակ-
ներն, ամէն յօրանջող անդունդ կամ զահավի-
ժող անցքեր: Հաւատքի աչքը միշտ կրնայ իր
առջեւի վեհափառ Ներկայութիւնը զանազանել,
եւ երբ այդ չտեսնուիր, վտանգաւոր է յառաջ

շարժիլ: Այս մխիթարանքը քու սրտիդ կապէ թէ
Փրկիչը անձնապէս փորձած է այն բոլոր փորձա-
ռութիւնները որոնցմէ կը պահանջէ որ դուն անց-
նիս, եւ քեզմէ չպիտի պահանջէր որ անոնցմէ
անցնէիր եթէ վստահ չըլլար որ ճամբան շատ
դժուար չէր քու ոտքերուդ, կամ չափազանց
քու կարողութեանդ համար: Առաջնորդը միշտ
մեր առջեւէն կ'երթայ: Անտառապահը անկողն
թաւուտքին մէջէն ճամբայ կը բանայ մեզի հա-
մար: Լայն ուտերով եղբայրը, ամբողջին մէջէն
անցք մը կը ճեղքէ մեզի համար: Մեր գործը մի-
այն հետեւիլ է:

Այս է օրհնեալ կեանքը: Զբաղձանք մեր առ-
ջեւը շատ հեռուն տեսնել. յաջորդ քայլին հա-
մար շատ զգոյշ չըլլալ, ճամբան ընտրելու կամ
բեռնաւորուած ապագայի ծանր պատասխանա-
տուութիւններովը փութաջան չըլլալ, այլ հան-
դարտօրէն Հովիւին հետեւէն երթալ, իրեն հետե-
ւելով քայլ առ քայլ:

Թարգ. Զ. Բ. ՊՈԻՏԱՐԵԱՆ

ՈՒՐԻՇՆԵՐ ԿՐՆԱՆ ԴՈՒՆ ԶԵՍ ԻՆԱՐ



Եթէ Աստուած քեզ կը կանչէ ճշմարտապէս
Յիսուս Քրիստոսի նկարագրին կերտելու՝ պիտի
առաջնորդուիս անձնուրացութեան եւ հեղութեան
ճամբաներէն որ բնաւ խորհած չէիր ընտրել:
Աստուած քեզմէ այնպիսի հնազանդութիւն մը
պիտի պահանջէ որ բոլորովին մինակ քալելու
պիտի պարտաւորուիս: Ուրիշ քրիստոնէի հետ
չպիտի համեմատիս, պիտի չունենաս ամէն բան
ընելու անկախութիւնը, որ ուրիշներ կը թուա-
տըրին:

* *

Քրիստոնեաները որ քեզ կը շրջապատեն,
աստուածապաշտ եւ պիտանի մարդիկ, կը յա-
ռաջդիմեն, վարուց ուղղութիւն կը գծեն, ծրա-
գիրներ կը պատրաստեն ու գործադրութեան կը
դնեն, բայց դուն չես կրնար անոնց նմանիլ, ա-
նոնց պէս ընելու նուազագոյն փորձը խոնարհե-
ցուցիչ հարուածով մը պիտի կասեցուի. Տէրը
կշտամբելով, մէկդի պիտի ընէ քեզ ու դուն
դառնօրէն պիտի զղջաս:

* *

Քեզ բոլորող անձնաւորութիւնները կրնան փառաւորուիլ իրենց գործին համար, համբաւին եւ գրչին համար. բայց Ս. Հոգին այնպիսի բան ամենեւին պիտի չթուլատրէ քեզի, եթէ երբեք յանդգնիս ալ փափաքելու՝ քեզի պիտի արժէ անանկ ծանր խոնարհութիւն մը, որ պիտի ըստիպուիս անձդ եւ բարի գործերդ արհամարհելու եզրակացութեան գալ:

..

Մտերիմներդ, քրիստոնեայ այնքան լաւ որքան դուն, առանց դժուարութեան դրամ կը շահին, կամ նոյնիսկ ժառանգ ձգելու բաղդը կ'ունենան: Կը թուի թէ Աստուած քեզ երերուն վիճակի մէջ կ'ուզէ պահել: Բայց Ան քեզ կը սահմանէ աւելի լաւագոյնի քան այս աշխարհի ոսկիին. բացարձակապէս զքեզ իրմէ կախեալ ընել կ'ուզէ, քու պիտոյքներուդ նպաստելու համար իր հոգածութեանը մենաշնորհը ընելով ամէն առաւօտեայ վերանորոգուած անտեսանելի գանձերէն զատ:

**

Տէրը կ'արտօնէ որ ուրիշները պատուելին եւ յառաջանան, բայց քեզ ստուերի մէջ պիտի պահէ իր փառքին համար պատուական պտուղներ պատրաստելու համար. պատուական ու քաղցրահիւթ պտուղներ որ շուքի մէջ միայն կը պարտին: Մտերիմներդ պիտի մեծնան, բայց դուն անշքութեան մէջ պիտի պահուիս, որիչներ կրնան Տէրոջը համար ծառայել ու իրենց ճիգերուն վարձքը ստանալ, բայց դուն պիտի սմբիս տաժանելի լուծի մը տակ եւ ոչ մէկը պիտի իմանայ այն բոլորը զոր դուն կ'ընես: Յետոյ քու աշխատութիւնդ աւելի թանկագին դարձնելու համար կրնայ թուլատրուիլ որ քու աշխատութիւնդ ուրիշի վերագրուի, բայց երբ Յիսուս վերադառնայ, քու վարձատրութիւնդ տասնապատիկ մեծ պիտի ըլլայ:

**

Սուրբ Հոգին քու վրայ աշալուրջ հոգածութեամբ մը պիտի հսկէ, փոքր բաներու համար պիտի սաստէ քեզ, ժամանակի կորուստ եւ ուրիշ անպատշաճ խօսքեր որ ուրիշ քրիստոնեաներու համար աննշմարելի է: Յիշէ որ Աստուած գերիշխան Տէրդ է, ուստի Ան Իրեն վերաբերողին

հետ իր կամքին պէս վերաբերուելու իրաւունք ունի: Բազմիցս քեզի նկատմամբ իր մատակարարութիւնները քեզ պիտի շփոթեցնեն եւ յուսախաբ ընեն, բայց եթէ ինքզինքդ Անոր յանձնես, Անոր ծառայելու առանց պայմանաւորումի, նախանձելի սիրով մը պիտի պարարէ քեզ ու քու վրադ օրհնութիւններ պիտի թափէ, որովհետեւ անոնցմէ ես, որ գիտեն Ամենակարողին սուրբ ծածկոյթին տակ պահուիլ:

**

Ուրեմն, ամէն պարագայով ընդունէ որ քու ընելիքդ ուղղակի Աստուծոյ Սուրբ Հոգիին հետն է: Լիզուդ սանձելու, ձեռքերդ կաշկանդելու ու աչքերդ փակելու անձնատուր ըլլալ կը պատուիրէ քեզի, եթէ նոյնիսկ իր միւս ծառաներուն հետ նոյն վերաբերումը չունենայ: Երբ սրտիդ ծածուկ խուցին մէջ կենդանի Աստուածը այսպէս իւրացնես, երբ կարենաս ուրախանալ պտանց վրդովուելու այս ծայրայեղ, անձնական եւ նախանձախնդիր հսկողութեան վրայ, երբ կ'ուրախանաս որ այս աստուածային նախանձախնդրութիւնը հետախուզէ սիրտդ եւ գալարէ բնութեանդ՝ ամէն խոռոչները, յայնժամ դուն երկինքի գաւիթը մտած պիտի ըլլաս:

Թարգ. Ֆրանսերէնէ
Տ. ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԱՆՁՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ

(ՍԵՐՏԷ, ԱՂՕԹԷ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԷ)

ԺԵ. ՊՏԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Սաղ. Ա. 3: Առակ. ԺԲ. 12: Երեմ. ԺԷ. 8: Փիլ. Ա. 41: Յովհ. 4, 8, 16: Հոով. 2. 22: Է. 4: Բ. 4որ. Թ. 10: Եփես. Ե. 9: Փիլ. Դ. 17: Կող. Ա. 10: Հոով. Ա. 13: Յովհ. Դ. 36: Եբր. ԺԳ. 15: Յակ. Գ. 17, 18: Պողոսեր կեանք ունիս:

ԺԶ. ՏԷՐՈՋԸ ՀԱՄԱՐ ՏԱԼ

Ծննդ. ԻԸ. 20-22: Ելից ԼԵ. 5: Բ. Օրին. ԻԶ. 12-14: Առակ. ԺԹ. 17: Մաղ. Գ. 10: Մատ. 2. 20, 24: Մարկ. ԺԲ. 44-44: Դուկ. Ը. 3: Գործ. Ի. 35: Բ. Ը. 1-5, 24: Թ. 6-10: Փիլ. Դ. 10-18: Եբր. ԺԳ. 16: Ա. Յովհ. Գ. 16-18:

Տէրոջը գործին համար կուտա՛ս:

ԺԷ. ԱՃՈՒՄ

Մաղ. ՂԲ. 12-13: Առակ. Դ. 18: Ղուկ. Բ. 52: Եփես. Դ. 15-16: Փիլ. Ա. 9: Դ. 12-14: Կող. Ա. 10: Բ. 6, 7: Ա. Թեա. Գ. 12: Բ. Թեա. Ա. 3: Ա. Տիմ. Դ. 12-15: Բ. Պետ. Գ. 18:

Աճում ունի՞ս:

ԺԸ. ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Ղուկ. Ը. 2, 3: Մատթ. ԻԵ. 34-39: Մարկ. Ժ. 43-45: Հոով. ԺԶ. 1-2: Ա. Կոր. Թ. 19: Դաղ. Ե. 13: Փիլ. Բ. 3-5, 20-22: Տիմ. Գ. 13-14: Ա. Տիմ. Ե. 10: Զ. 18-19: Յակ. Ա. 27: Ա. Յովհ. Դ. 16-18: Եբր. Զ. 10: Յօժար էս ամենուն ծառայելու:

ԺԹ. ՆԵՐՆԷԼ

Առակ. ԺԹ. 11: Մատթ. Զ. 14-15: ԺԸ. 21, 22, 35: Մարկ. ԺԱ. 25, 26: Ղուկ. ԺԷ. 3, 4: Յովհ. Ը. 11: Հոով. ԺԲ. 17-21: Բ. Կոր. Բ. 7-11: Եփես. Դ. 2: Կող. Գ. 13: Եփես. Դ. 32: Ղուկ. ԻԳ. 34: Գործ. Է. 59: Բ. Տիմ. Դ. 16:

Ամենուն կրնա՞ս ներել, ներած ես:

Ի. ՍԻՐՆԷԼ

Մատթ. Ե. 44: ԻԲ. 37, 38: Ա. Յովհ. Բ. 40, Դ. 14: Դ. 7-11: Է. 1: Յովհ. ԺԳ. 34, 35: ԺԵ. 17: Կող. Ա. 4, 8: Գ. 14: Ա. Թեա. Դ. 9: Ա. Տիմ. Ա. 5: Փիլ. Ա. 9: Եբր. ԺԳ. 1: Հոով. ԺԲ. 9, 10: Բ. Պետ. Ա. 7: Ա. Պետ. Ա. 22: Ա. Կոր. ԺԳ. 1-7:

Աստուծոյ պատուէրին պէս կը սիրե՞ս:

Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

Փօստ Օպէնաս

ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ՄԱՐԴԱՍՊԱՆԸ ԵՒ ԳԻՏՈՒՆԸ(1)



...Իրիկուն մը սրահը արտասովոր կերպով լիցուած էր: Առաջին շարքին վրայ նստած էր

(1) Այս հոգեցունց պատմութիւնը մէկ գլուխն է «Քրիստոս անաստուածներուն մէջ, վկայ մը խաչին տակ» վերադասութիւնը կրող գիրքին, որուն հեղինակն է Ռուսիա ծնած աւետարանիչ Կ. Մարթընս: Այս հատորին բովանդակութիւնը իր անձնական կեանքին ապրումներն են: Ինք հարազատօրէն մեզի կը ներկայացնէ զարհուրե-

իրապաշտական դպրոցի տնօրէնը: Արհամարհական նայուածքով ստէպ կը դիտէր ան ներկաները եւ յայտնի կ'երեւար թէ ինքզինքը անհանգիստ կ'զգար այդ միջավայրին մէջ: Բազմութիւնը զասակարգային մեծ խառնուրդ մը կը ներկայացնէր: Հոն կային շատ պարզ գիւղացիներ, բանուորներ, քովիւնիստներ եւ քանի մը մտաւորականներ:

Պատգամը տրուելէն անմիջապէս վերջը ադտոս եւ պօղաղի մարդ մը, որ լայն բացուած աչքերով եւ մեծ ուշադրութեամբ կ'ունկնդրէր քարոզին, բարձրացաւ սրահին մէջտեղը եւ աղաղակեց,

— Երեսիս նայեցէք, որքա՛ն սեւ է ան, այո, բայց սիրտս խիստ աւելի սեւ է. Ձարական իշխանութեան ժամանակ, 18 տարի անդադար Սիւպերիոյ տաժանակիր աշխատանքի դատապարտուածներու բանտին մէջ գտնուած եմ: Եբր Սօվիէթները իշխանութեան զլուխ անցան, զիս ազատ հռչակեցին ու ես հայրենիք վերադարձայ: Անմիջապէս քովիւնիստական շարքերու մէջ մըտայ ուր պաշտօն եւ լայն իշխանութիւն տրուեցաւ ինծի: Մարդիկ մեռցնելը իմ բարձրագոյն հաճոյքս էր: Օրինաւոր կամ ապօրինի կերպով այս սրահին մէջ գտնուող բազմութեանէն շատ աւելի մեծ թիւով մարդիկ սպաննած եմ: Այս ըսաւ եւ ինքզինքը գետին նետելով սկսաւ դառնապէս լալ: Անոր հարցուցի թէ արդեօք կը ճանչնա՞ր Յիսուս Քրիստոսի Աւետարանը:

— Ո՛չ, պատասխանեց ան, երբեք կարդացած չեմ զայն: Դիպուածով էր որ հոս մտայ, եւ այս առաջին անգամն է որ Յիսուսի վրայ լսեցի: Իմ անցեալիս վրայ մեծապէս կը ցաւիմ ու կը զղջամ: Արդեօք ինծի պէս մէկը կրնա՞յ իր մեղքերուն թողութիւն գտնել:

Մեզի, խեղճ մարդկային արարածներուս համար, շատ դժուար է հաւատալ, թէ այս կարգի մարդասպաններ կրնան իրենց բոլոր մեղքերուն թողութիւնը եւ յաւիտենական կեանքի վստահութիւնը ընդունիլ: Այո, այս մարդը սպաննած էր բազմաթիւ անմեղ էակներ: Գործեր էր անլուր եւ աններելի ոճիրներ, բայց Փրկիչը կը սիրէ մեծ

լի դէպքերը կրօնական խուժողութ հալածանքներու, որ սօվիէթները կը յարուցանէն Աստուծոյ եւ Անոր ճշմարիտ վկաններուն դէմ: Բայց հոն ներկայացուած է նաեւ պատմութիւնը Քրիստոսի փառաւոր յաղթութեան, որոնք տարուած են այն երկրին մէջ, եւ այն ալ Աւետարանին ամենակատարի թշնամիներուն վրայ:

մեղաւորները: Աստուծոյ խօսքը բալորովին ճշմարիտ է որ կ'ըսէ, «Նոյնիսկ եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս են, ձիւնի պէս պիտի ճերմկնան...»:

Վերստին ծնունդի հրաշքը այս մարդուն մէջ ալ կատարուեցաւ: «Աստուծոյ խաղաղութիւնը ընդունեց, որ ամէն միտքէ վեր է»: Մեզի այնպէս թուեցաւ թէ դեռահարի մը բժշկութեանը ներկայ գտնուեցանք: Իր դէմքը կը ճառագայթէր երբ ելաւ իր նախկին տեղը նստելու: Բոլոր աչքերը իրեն կը նայէին: Առաջին նըստարանին վրայ նստելու պատիւը չափազանց գրտնելով կ'ուզէր գետինը կծկտած մնալ ըսելով,

— Ես արժանի չեմ նստելու այն շարքին վերայ ուր ուրիշ մարդիկ կը նստին: Բայց ես գինք հրաւիրեցի վերը նստելու:

Իրապաշտական դպրոցի տնօրէնը այս բոլորը տեսնելով, սաստիկ կը նեղուէր իր նստած տեղը: Ոտքի ելաւ վերջապէս ջղայնացած, ոտքերը ամուր մը տախտակամածին զարնելով, եւ ձեռքը ձեռքին բաղխելով աղաղակեց, «Ո՛չ, հա՛ն թէ ինչե՛ր տեսնելու եկած ենք ապուշներու եւ յիմարներու այս բազմութեանը մէջ»: Ու դուրս ելաւ: Իր կինը հոն էր, բայց տեղէն չշարժեցաւ: Այդ մարդուն մեկնիլը ներքնապէս ուրախացուց զիս, որովհետեւ ամբողջ քարոզութեան ընթացքին, ան չղաղարեցաւ աչքերը շեշտակի վրաս տնկելէն: Ինծի այնպէս կը թուէր թէ բերնէս ելած ամէն մէկ խօսքը կը կշռէր:

Մօտաւորապէս քառորդ ժամ վերջ՝ վերադարձաւ թաշկինակ մը ձեռքին մէջ, ճակտէն հոսող տաքնապի քրտինքը սրբելով անդադար: Շատ դանդաղ քայլերով դէպի բեմ յառաջացաւ:

— Սիրելի պարոն, ըսաւ ինծի, հապա ե՞ս ինչ պէտք է որ ընեմ:

— Դուք որ բարձր կրթութեան տէր էք, պատասխանցի անոր, դուք արդէն երկինքի ճամբան պէտք էք ճանչնայիք:

Բայց ճիշդ այս բանն է որ ես չեմ գիտեր: Անհաւատ մը եւ հայհոյիչ մըն եմ ես: Երբեք Աւետարանին շուրջ խորհած կամ մտահոգուած չեմ:

— Փրկութեան ճամբան շատ պարզ է, պատասխանեցի ես. ճանչցէք եւ խոստովանեցէք ձեր մեղքերը: Խոնարհեցէք երկինքի ու երկրի Արարիչին առջեւ, ինչպէս այս մարդասպանը ըրաւ: «Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ», ուրիշ ճամբայ չկայ:

— Այո, դիւրին է ձեզի այնպէս խօսիլ: Դուք ինծի այս մարդասպանը կը ցուցնէք ու կը խոր-

հիք թէ ես մտաւորական մը ըլլալուս համար այս ոճրագործին անցեալին հետ բաղդատուելիք անցեալ մը չունի՞մ: Իրաւ, ես մտաւորական մըն եմ, ֆեթսպուրկի հաստատութեան մէջ 25 տարի ուսուցիչ եղած եմ, այն ալ ամենաբարձր աստիճանի դիրքի վրայ: Մեծ դժուարութեամբ յաջողած եմ վերապրիլ: Բայց պէտք է ինծի խոստովանիլ թէ՛ 55 տարիներէ ի վեր Աստուծոյ հայհոյած եմ անդադար, եւ 25 տարիներէ ի վեր, իւրաքանչիւր տարի աւելի քան հազար աշակերտներու անաստուածութիւն ուսուցած եմ: Ամէն տարի միշտ աւելի նոր թափով կը ջանայի անոնց փաստել թէ ո՛չ Արարիչ կայ, ո՛չ ալ Աստուած: Ո՛չ երկինք կրնայ գոյութիւն ունենալ, ո՛չ ալ դժոխք: Բայց ա՛հ, ամենազարհուրելին այն է որ պօլշեիկեան յեղափոխութեան ժամանակ ես տեսայ իմ բազմաթիւ աշակերտներէս շատեր՝ յեղափոխութեան զուխը անցած՝ կոտորածի բարբարոսութիւններուն կը մասնակցէին: Ահաւասիկ իմ աշխատութեանս դժխային պտուղը: Ես աւելի ոճիրներ գործած եմ քան այս մարդասպանը որ կը տեսնէք: Ես հոգիներ թունաւորեցի: Ես ծնայ ու մեծցուցի մարդասպաններ, որոնք ի գործ կը դնեն այսօր իրենց աւանդած ուսուցումներս: Այս մարդասպանը ինք միտակը կ'սպաննէր, բայց ես բազմաթիւ գործակիցներով մարդասպանութիւն կ'ընեմ: Ինք այսօր այս ապաշխարութեամբ վերջ դրաւ իր անցեալ կեանքին, մինչ ես ոչինչ կրնամ բարեփոխել: Նոյնիսկ եթէ Աստուած ինծի ներէ ալ իմ անթիւ մեղքերս, դեռ իմ վատասեռիչ գործս կը մնայ ու կը շարունակուի ոճիր ու սարսափ սրբոնելով ամենուրեք: Ահաւասիկ ես, իմ բոլոր պիժութեամբս եւ անօրէնութեամբս: Ինծի նման մարդոց համար փրկութիւն չկայ...

Խորապէս ընկճուած զուխը կախեց կուրծքին եւ արցունքով բոլորովին թրջուած դէմքը ծածկեց երկու ձեռքերուն մէջ: Կարդացի անոր Աստուածաշունչէն, մասնաւոր կերպով այս աշխարհի կորսուածներուն ուղղուած սիրոյ եւ փրկութեան հրաւերի սքանչելի խօսքերը: Այդ պահուն զուխը բարձրացուց եւ ժողովուրդին դառնալով ըսաւ,

— Մենք ենք որ Ռուսիան ներկայ այս ողբալի վիճակին հասցուցինք, անոր մեծ եւ խորունկ տաքնապին պատասխանատուները մենք ենք, մենք հայհոյիչներս եւ մարդասպաններս: Մենք մարդոց խիղճը սպաննեցինք, անոնք ալ Ռուսիան յեղափոխեցին եւ հիմա Ռուսիան կը կառավարուի ամենազարհուրելի տեսակով: Աղօ-

թեցէք ինծի համար, կ'ուզեմ Աստուծոյ առջեւ ծովի և հաւատալ խոնարհութեամբ թէ Ան կըրնայ մեզի պատասխանել:

Խիստ շատերը սկսան լալ: Մէկը չկար որ իր անցեալին վրայ չխորհէր: Ազօթքի անմոռանալի ժողով մըն էր այդ: Շատեր աղաչանք կը մատուցանէին Աստուծոյ, զպրոցի տնօրէնի: համար: Ինք ալ սկսաւ ազօթել այսպէս,

Ո՛վ Աստուած, եթէ Դուն կաս, Ինքզինքդ ինծի յայտնէ: Ողորմէ ինծի եւ շնորհք ըրէ Գու փրկութեանդ փորձառութիւնը ինծի պարգեւելով: Ներէ ինծի իմ մեղքերս:

Իր խոստովանութիւնը խորունկ ազդեցութիւն ըրաւ ամենուն վրայ: Ամբողջ գիշերը պիտի չը բաւէր լսելու համար բոլոր այն հոգիներուն ազօթքները, որոնք կ'ուզէին իրենց անցեալ կեանքին վերջակէտ դնել: Աստուծոյ հոգին ազատ ասպարէզ գտած էր: Ամէն մարդ կը յանդիմանուէր իր մեղքերուն համար: Սքանչելի էր լսել այդ փրկութիւնները եւ փառաբանութիւնները որ նորագարծ հոգիներէն վեր կը բարձրանային: Երբ բոլորս ոտքի կայնած կ'ուզէինք վերջացնել այս օրհնեալ ժողովը երգելով, «Նոկ արիւնովդ ով Յիսուս, թողութիւն կայ մեղքերուս...», այդ վայրկեանին, բոլոր ժողովուրդին առջեւ դպրոցին տնօրէնը գրկեց հին մարդասպանը եւ գիրկընդխառն, երկուքն ալ սկսան լալ իրենց ուրախութենէն, եղբայրներու պէս՝ որոնք երկար ժամանակ է վեր իրարմէ բաժնուած ապրած են. եւ իրականութիւնն ալ այդպէս չէ: Մենք մեղքի պատճառաւ իրարմէ անշատուած մէկ չօր որդիները չէնք: Ի՛նչ մեծ հրաշք է երբ սրտերը զիրար կը գտնեն Յիսուս Քրիստոսով եւ իրարու կը փաթթուին որպէս հարազատ եղբայրներ: Միայն Աստուծոյ Հոգին կրնայ խիստ բարձր մտաւորական մը եւ գոհիկ մարդասպան մը իրարու միացնել որպէս նոյն հօր որդիները:

Յաջորդ օրը հրաւիրուեցայ տնօրէնին հետ ճաշելու: Որքա՛ն սրտաշարժ էր տեսնել զանոնք Ծնունդի մանուկներու պէս երջանիկ: Ամուսինն եւ կինը իրարու ձեռք բռնած անդադար կը խօսէին իրենց գտած Մեծ Փրկութեանը վրայ:

Երբ կը պատրաստուէինք երեքս միասին իրիկուայ ազօթած ժողովին երթալու, տնօրէնը ինծի ըսաւ,

— Առաջ անցէք կնոջս հետ, ես դեռ բան մը ունիմ կարգադրելիք:

Մինչ մենք առաջին երգը կ'երգէինք, նորագարծ ուսուցիչը իր կարգի բոլոր աշակերտներով ներս մտաւ եւ առաջին նստարաններուն վրայ

նստեցան: Հոն, այդ իրիկունը անոնցմէ եօթը երիտասարդներ ու երիտասարդուհիներ Աստուծոյ խաղաղութիւնը գտան:

Հրաշալի էր պարզապէս տեսնել թէ ինչպիսի՛ խանդավառութեամբ տնօրէնը իր վկայութիւնը կուտար եւ ուրիշ երիտասարդներ ալ Տէրօջը կ'առաջնորդէր: Կարծես կ'ուզէր Աստուծմէ հեռու ապրած տարիներուն մէջ գործած բոլոր փաստը հատուցանել: Իրեն համար գործի լայն դաշտ մը կը բացուէր իր աշակերտներուն մէջ:

Երկու շաբաթի չափ եղբայր թ.ին հետ այս վայրին մէջ աշխատեցանք: Շնացողներ, աւագակներ, մարդասպաններ Քրիստոսով փրկութեան ճամբան գտան: Ոչ մէկ բան անկարելի է Աստուծոյ:

Իսկ դուն, սիրելի ընթերցող, որ այդ վայրենի մարդասպան կամ մտասպան, խղճասպան դասակարգներուն չես վերաբերիր, բայց տակաւին չես վերաբերիր Աստուծոյ զաւակներու կարգին, չե՞ս զգար թէ Տէրը խօսելիք մը ունի քեզի այս տողերով: «Որդեակ իմ, քու սիրտդ ինծի տուր»:

Թարգ. Ս. ՊԱՅԳԱՆԵԱՆ

Ի՞նչ ՊԵՏՔ Է ՀԱՒԱՏԱԼ

Որչափ յաճախակի կը լսուի այս հարցումը: Վերջերս աւետարանական քարոզի մը մէջ: ունկնդիր մը կ'սկսի ըսել, «Այնչափ տարբեր հաւատամք կայ, այնչափ կրօնք... Ի՞նչ պէտք է հաւատալ»:

Արդարեւ եթէ մենք նկատի առնենք մարդոց զանազան կարծիքները, եւ իրապէս քրիստոնեայ աշխարհի բազմաթիւ աղանդները, ամէն մէկը իր հաւատքին միակողմանիութիւնովը, կրնանք հասկնալ ճշմարտութիւնը փնտռող մարդոց տատամիլը:

Սակայն խնդիրը իսկոյն կը պայծառանայ, երբ հասկնալու շլլանք միայն այն՝ որ կարեւոր է, այսինքն՝ ո՛չ թէ ի՞նչ պէտք է հաւատալ, այլ Որո՞ւ պարտինք հաւատալ:

Այսպէս նաեւ այն մեծ երկրաշարժին ատեն, որ կէս գիշերին մինչեւ իր հիմերը շարժեց Փիլիպպէի բանտը, երբ բանտապետը դողալով հարցուց Պօղոսի և Շիղայի, «Տէրեր. ինծի ի՞նչ պէտք է ընել որ փրկուիմ»: Իր պատասխանին մէջ առաքեալը կրօնք մը չներկայացուց, հապա անձ

մը, «Հաւատա Տէր Յիսուսի ու պիտի փրկուիս»
Գործ. ԺԶ. 31):

Գործք Առաքելոց Գիրքը մեզի կը պատմէ նաեւ Եթէնվպացի ներքինիին պատմութիւնը որոն հանդիպեցաւ Փիլիպպոս աւետարանիչ Գաղաթի ճամբուն վրայ: Երուսաղէմ գալէն վերջ իր երկիրը վերադարձին: Այս մարդը, Կանգակա թագուհիին զանձապահը, իր կողքին մէջ նըստած Եսայի մարգարէին գիրքը կը կարդար: Եւ գիրքին մէջ կարդացած տեղը այս էր, «Ոչխարի պէս մորթուելու աւարուեցաւ, ու իր խուզողին առջեւ մունջ կ'եցող զառնուկի պէս, այնպէս իր բերանը չբացաւ. իր խոնարհութեանը մէջ իր դատաստանը վերցուեցաւ եւ անոր ազգատոհմը ո՞վ պիտի պատմէ, վասնզի Անոր կեանքը երկրէ կը վերցուի»:

Զափազանց հետաքրքրուած այս խօսքէն, հարցուց նա Փիլիպպոսի, «Մարգարէն որո՞ւ համար կ'ըսէ զայս, իրե՞ն համար թէ ուրիշի մը համար»: Եւ Փիլիպպոս, բանալով իր բերանը, եւ գրքին այս խօսքէն սկսելով Յիսուսը քարոզեց անոր (Գործ. Ը. 26-30):

Յիսուս, ո՞հ, թանկագին անուն, Փրկիչ մը կենդանի եւ փառաւորեալ, Փրկիչ մը ամենուս համար: Փրկիչ մը որ լիովին կատարեց իր գործը, զոհացնելով Աստուծոյ արգարութեան պահանջը: Ահա այսպիսի անձ մըն է որ Աստուծոյ կը ներկայացնէ ձեր հաւատքին:

Ուրեմն ալ մի՛ հարցնէք. ի՞նչ կը պարտիմ հաւատալ, հապա վստահեցէք անձնական Փրկիչի մը որ կ'ուզէ ըլլալ ձեր Փրկիչը:

Հաւատացէք Տէր Յիսուս Քրիստոսի եւ դուք ալ կը փրկուիք:

Ահա, ես դուր կայնիւր եմ ու կը զարնեմ, եթէ մէկը իմ ձայնս լսէ ու դուր բանայ, անոր քով պիտի մտնեմ ու անոր հետ ընթրիք պիտի ընեմ... Յայտ. Գ. 20:

Թարգ. Մ. Կ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՄԱՐՏ 3.—

ՊԵՏՐՈՍ ՄԵՂԻԻՆ ԴԷՄ ԿԵՆԱԼՈՎ ՍՈՒՏԸ ԵՒ ԿԵՂԾԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՔՕՂԱԶԵՐԾԷ Կարգա Գործ. Ե. 4-42: Ը. 4 25:

Սատանան Անանիան եւ Սափիրան փորձեց Աստուծոյ սուտ խօսելու: Այսօր դեռ այս է Սատանային գործը, մարդիկ փորձել եւ խաբել: Եթէ Աստուծոյ խօսքէն սերտենք Սատանային քանի մը չար գործերը՝ ասիկա կրնայ մեզի օգնել անկէ զգուշանալու:

Սատանան մարդոց միտքերը կը կուրցնէ Բ. Կոր. Դ. 4:

Սատանան մարդիկ կը չարչարէ Ղուկ. Թ. 42: Սատանան մարդոց սուտ խօսիլ կուտայ Գործ. Ե. 3:

Սատանան մարդիկ չարութեան կը զրգէ Ա. Մնաց ԻԱ. 1, Յովհ. ԺԳ. 2:

Սատանան Աստուծոյ խօսքը չարին գործածել կ'ուզէ Մատթ. Դ. 6: Տես նաեւ Բ. Կոր. Բ. 17: Դ. 2: Եփես. Դ. 14: ԺԱ. 3, 13-15: Ա. Թեա. Բ. 3-5: Բ. Պետ. Գ. 16:

Սատանան մարդիկը կ'ըլլէ կ'աշխատի Ա. Պետ. Ե. 8:

Սատանան մարդիկը կը վշտացնէ Յոր. Բ. 7:

Սատանան մարդիկը Աստուծոյ գործէն կ'արգիլէ Ա. Թեա. Բ. 18: Տես նաեւ Դան. Ժ. 12-14:

Ինչպէ՞ս պատրաստուելու է Սատանային յարձակումներուն դէմ զննելու: Եփես. Զ. 11: Այս համարը բնաւ մի մոռնար:

ՄԱՐՏ 10.—

ՊԵՏՐՈՍ ՀԵԹԱՆՈՍԵՐՈՒՆ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԴՈՒՌԸ ԿԸ ԲԱՆԱՅ, ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ ԱՄԷՆ ՄԱՐԴՈՅ ՀԱՆԴԷՊ Կարգա Գործ. Ժ. 1-11: ԺԵ. 6-11:

Այս դասը ինչպէս Պետրոսի սորվեցուց, պէտք է սորվեցնէ նաեւ մեզի, թէ փրկութիւնը բոլոր մարդոց համար է: Մեր մէջ շատ կը պակսի միսիոնարական հոգին Ափրիկէի խափշիկները նոյնքան իրաւունք ունին Քրիստոսի փրկութեան որչափ մենք:

Փրկութիւնը ամենունն է: Աստուծոյ դարեր առաջ խօսեցաւ Եսա. ԽԵ. 22: Յիսուս ամէն ալ կը կանչէ Յովհ. Է. 37:

Ի՞նչ կ'ըսէ Պաղոս «Երբայեցի Եբրայեցիներէ» Հռով. Ժ. 12:

ԱՄԷՆ ՈՎ ՈՐ Ա. Յովհ. Է. 4: Քանի մը ուրիշ համարներ Յովհ. Դ. 15: Գործ. Ժ. 43: Եսայ. ԾԵ. 4: Ա. Տիմ. Բ. 4: Յայտ. ԻԲ. 17:

ՄԱՐՏ 17.—

ՊԵՏՐՈՍ ԻՆՉՊԷՍ ԲԱՆՏԷՆ ԱԶԱՏԵՑԱԻ Կարգա Գործ. ԺԲ. 1-19:

Հոս Պետրոսը բանտի մէջ կը գտնենք: Նա Աստուծոյ առջեւ չարագործ մը չէր: Պետրոս մար-

դոց ատելութեան առարկայ էր, Քրիստոսի սիրոյն: Ուրիշ մարդիկ եւս բանտարկուեցան իրենց Աստուծոյ ծառաներ ըլլալուն եւ Անոր հրահանգներուն համար: Օգտակար պիտի ըլլայ անոնց մասին կարգալ:

Միքիա մարգարէն Գ. Թագ. ԻԲ. 27:

Պօղոս եւ Շիղա Գործ. ԺԶ. 23:

Յովսէփ Ծննդ. ԼԹ. 20:

Առաքեալները Գործ. Ե. 17, 18:

Երեմիա մարգարէն Երեմ. ԼԷ. 45: ԼԸ. 6:

Յովհաննէս Մկրտիչ Մարկ. Զ. 17:

Անանի տեսանողը Բ. Մնաց. ԺԶ. 7-10:

Պետրոս առաքեալ Գործ. ԺԲ. 3, 4:

Սամիսոն Դատ. ԺԶ. 24:

Պօղոս առաքեալ Գործ. ԻԳ. 10:

ՄԱՐՏ 24.—

ՊԵՏՐՈՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՅԻՈՅՆ ԿԸ ՍՈՐՒ-ՎԵՅՆԷ. Կարգաւ Ա. Պետ. Գ. 8-18:

Քրիստոսեաներ իրարու հանդէպ ի՞նչպիսի վերաբերում պարտին ունենալ: հետեւեալ համարները ազօթքով սերտէ, զոց սորովէ եւ զանոնք Աստուծոյ շնորհքով քու կեանքիդ փոխանցէ.

Ա. Կոր. Ա. 10: Յովհ. ԺԳ. 34: Ա. Թես. Դ. 6: Դործ. Դ. 32: Ա. Յովհ. Գ. 16: Ա. Կոր. ԺԲ. 26: Սաղ. ՃԼԳ. 4: Ա. Յովհ. Դ. 24: Հռով. ԺԲ. 10: Եփս. Դ. 23:

ՄԱՐՏ 31.—

ՊԵՏՐՈՍԻ ԿԵԱՆՔԸ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ Կարգաւ Ա. Պետ. Ե. 6-11: Բ. Պետ. Գ. 14-18:

Պետրոսի կեանքը պայքար մը եղաւ յաճախ արթուն կենալու: Պենտեկոստէէն յետոյ թէն նա մնաց «հաստատուած, զօրացած ու հիմնուած» (Ա. Պետ. Ե. 19), բայց նա իր անցեալ կեանքի փորձառութենէն դասեր կը հանէ հաւատացեալներուն: Վասնզի նոյն Սատանան է «հին օձը» որ կ'աշխատի հաւատացեալները ցորենի պէս խարբալի:

Արթուն կենալու համարներ.—

Բ. Օրին. Դ. 9: Մատթ. ԻԶ. 44: Յայտ. Գ. 2: Ա. Կոր. Ժ. 12: Կող. Դ. 2: Ա. Պետ. Ե. 8: Ա. Թես. Ե. 6: Ա. Պետ. Դ. 7: Ա. Կոր. ԺԶ. 13: Մարկ. ԺԳ. 35-37:

Այս համարները ազօթքով սերտէ, զոց սորովէ եւ զանոնք Աստուծոյ շնորհքով քու կեանքիդ փոխանցէ:

ԹԱՐԳՄ.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՃԱՆ ՈՒԷՍԼԻ

Նախորդ գլխուն մէջ տեսանք թէ Ճան Ուէսլիի Մորաւեան եղբայրութեան հանդիպիլը եւ անոնց հետ իր յարաբերութիւնները՝ հոգեւոր մեծ օրհնութեանց միջոցներ եղան իրեն համար: Զօրհիոյ միսիոնարութենէն վերադառնալէն ետքն ալ՝ Ուէսլի սերտ յարաբերութիւն ունեցաւ Մորաւեաններու հետ: Շփանկէնպէրկէ յետոյ Ուէսլիի հոգեւոր հայրը կարելի է սեպել Պետրոս Պէօլէրը, Լոնտօնի մորաւեան պատուելին:

Իր օրագրութեան մէջ Ուէսլի 1738 Փետր. 7ի սկիզբը կը դնէ սա բառերը, «Շատ յիշատակելի օր մըն է այսօր», վասնզի այդ օրը առաջին անգամը ըլլալով Պէօլէրի հանդիպած էր: Անկէ յետոյ անոնք յաճախակի տեսակցութիւններ ունեցան, որոնց ընթացքին Օքսֆորտի աստուածաբանը մէջտեղ կը թափէր իր փիլիսոփայութիւնը՝ իսկ մորաւեան պատուելին Ս. Գրոց վերայով իր մեծ հմտութիւնը՝ միացած իր փորձառական հոգեւոր կեանքի կենդանի վկայութեանց: Եւ որովհետեւ Ուէսլի մանկան մը խոնարհութիւնը ունէր եւ անկեղծ փափաքը ու ծաւալը այդ կենդանի հաւատքին հասնելու, ամէն անգամին ալ ինքն էր որ տեղի կուտար եւ իր մշուշապատ աստուածաբանական փիլիսոփայութիւնը, իր կասկածները մէկը միւսին ետեւէն կը ցնդէին՝ տեղի տալով Աստուածային շնորհաց լուսոյ փառաւոր ճառագայթներուն՝ որոնցմէ ողորուած էր Պէօլէր եւ կը ցոլացնէր ճշմարիտ լուսաւորի մը պէս (Փիլ. Բ. 15): Լատիներէնով եղած իրենց այս խօսակցութիւններէն հետեւալ խօսքը իբր հռչակաւոր եւ դասական խօսք մեզի մնացած է Պէօլէրի կողմէ Ուէսլիի ուղղուած «Mi frater, mi frater, excoquenda est ista tua philosophia» — «Եղբայրս, եղբայրս, պէտք է որ վրայէդ մէկդի նետես այդ փիլիսոփայութիւնը»:

Իրականին մէջ զրեթէ առանց այլեւայլի կարելի է Մեթոտական եկեղեցին Մորաւեան եկեղեցւոյ զուտորը կոչել: Ուէսլի ինքը ի սկզբան բոլորովին անոնցմէ եղածի պէս էր: Իր օրագրութեան մէջ նոյնիսկ սա խօսքին կը հանդիպինք — «Կը զարմանամ թէ ինչո՞ւ բոլորովին Մորաւեաններուն չեմ միանար»:

Ուէսլի հնազանդեցաւ եւ մէկդի դրաւ փիլիսոփայութիւնը, նոյնիսկ այն աստիճան որ խոստովանեցաւ թէ ինքը ցարդ սխալ հասկցած էր ճշմարիտ հաւատքը, ու Աստուծոյ խօսքին մէջ յայտնուած ճշմարտութեանց տեղ չոր եւ անպտուղ մտքի հաւատք մը գոյացուցած էր: Պէօլէր անոր ցուցուց «թէ ամէն ուր որ ճշմարիտ հաւատք գոյանայ, այս հաւատքը հոգւոյն մէջ խաղաղութիւն եւ սրբութիւն կը գոյացնէ, եւ հաւատացողին կուտայ այն վստահութիւնը թէ իր մեղքերը ներուած են Քրիստոսի արեան արժանիքով եւ թէ ինքը Աստուծոյ հետ հաշտուած է»:

Պէօլէր միշտ կը յորդորէր Ուէսլին Ս. Գրոց դիմելու, ու երբ նա յօժարեցաւ մեկնութեան գիրքերը մէկդի դնելով Նոր Կտակարանը իր յունարէն բնագրին մէջ սերտել՝ շատ շուտ տեսաւ թէ Աստուծոյ խօսքը զինք կը դատապարտէր ասոր նման համարներով:—

Նոյն ինքն Հոգին վկայութիւն կուտայ մեր հոգիին հետ թէ մենք Աստուծոյ որդիներն ենք» (Հռով. Ը. 16):

«Ան որ Աստուծոյ Որդւոյն կը հաւատայ, վեկայութիւնը իր մէջ ունի» Ա. Յովհ. Ե. 10):

«Ամէն ով որ Աստուծմէ ծնած է մեղք չգործեր» (Ա. Յովհ. Գ. 9):

Աստուծոյ խօսքին այս վկայութիւններուն միացան կենդանի վկաներ, երբ Պէօլէր Ուէսլիի խնդրանքին վրայ քանի մը եղբայրների բերաւ. անոնք վկայեցին թէ իրենց հոգւոյն մէջ մեղքի եւ դատապարտութեան համոզումին յաջորդած էր խաղաղութիւն՝ անմիջապէս որ անոնք հաւատացած էին, վայրկեանաբար ունեցած էին մեղքերու թողութեան եւ մեղքերէ ազատ ըլլալու վստահութիւնը: Անոնք ըսին նաեւ թէ այս հաւատքը Աստուծոյ ձրի շնորհքն է, զոր նա կուտայ ամէն հոգիի որ եռանդով ու յարատեւութեամբ կը փնտռէ ու կը խնդրէ զայն:

Ուէսլի կատարեալ համոզում գոյացուց այս ճշմարտութեանց մասին եւ սրտեց Աստուծոյ օգնութեամբ օր մը այդ թանկագին հաւատքին տիրանալ:

1838 Մարտ 5-ի կիրակին Ուէսլի Պէօլէրի հետ խօցակցութեան մը ընթացքին վճռական համոզման մը եկաւ թէ իր ունեցած հաւատքը «փրկարար հաւատքը» չէր: Բայց լաւ է թողուլ որ Ուէսլի ինքը խօսի իր օրագրութենէն: «Կիրակի օր մեծ Աստուծոյ շնորհքով Պէօլէր զիս համոզեց իմ անհաւատութեան մասին, ցոյց տալով պակասը այն հաւատքին որով միայն կը փրկուինք:

«Անմիջապէս ինքնիրենս ըսի, «Ուրեմն ալ մի քարոզեր, ի՞նչպէս կրնաս ուրիշներու քարոզել երբ դուն ինքդ այդ հաւատքը չունիս»: Պէօլէրի հարցուցի թէ պէ՞տք էր քարոզելը, ձգէ՞ր թէ ոչ: Նա պատասխանեց, «Ոչ երբեք»:

Ես հարցուցի, «Բայց ինչպէ՞ս կրնամ քարոզել»:

Նա ըսաւ, «Առ այժմ քարոզէ հաւատքը միւնչեւ որ զայն ունենաս, և յետոյ զայն պիտի քարոզես, որովհետեւ զայն ունիս»:

Ըստ այս խրատին յաջորդ օրը երկուշաբթի 6 Մարտին սկսայ քարոզել այս նոր վարդապետութիւնը: Առաջին անձը որուն միայն հաւատաքով փրկութիւնը ցուցուցի՝ մահուան դատապարտուած բանաարկեալ մըն էր, որուն ցարդ խօսիլ չէի ուզած վասնզի ես հակառակ էի մահուան անկողնի փրկութեան զաղափարին, համոզուած ըլլալով թէ փրկութիւն ստանալու համար ապաշխարութեան պէտք էր ընկերանար շարք մը անհրաժեշտ բարեգործութիւններ: (Այս մարդը քիչ յետոյ ընդունեց փրկութիւնը եւ խաղաղ ու ուրախ սրտով քալեց դէպի կախաղան):

Ուէսլի շարունակեց ուրիշ հոգիներու խօսիլ այս հաւատքին մասին եւ Աստուծոյ հաճեցաւ շատերու փրկութիւն շնորհել անոր միջոցաւ: Յաճախ անոր ճամբորդութեանց ընթացքին հանդիպած անձեր միայն մէկ խօսակցութեամբ մը մեղքի խորունկ համոզում գոյացնելէ յետոյ վայրկեանական փոփոխութիւն ունենալով և սրտի նորոգութեամբ, մեղքերու թողութեան վստահութեամբ եւ փրկութեան ուրախութեամբն ու խաղաղութեամբը կ'ողողուէին:

Ուէսլի որոշած էր ոչ մէկ պատեհութիւն չը փախցնել, մանաւանդ ճամբորդութեանց ընթացքին, պանդոկներու կամ ճաշարաններու մէջ եւ ամենուրեք ամէն մարդու Քրիստոսի արեամբ եւ միայն հաւատքով եղած ձրի փրկութիւն առաջարկել: Օր մը, որ ճամբան փոթորիկի բռնընկեցաւ. զայն նկատեց իբրեւ Աստուծմէ յանդիմանութիւն մը, վասնզի նախորդ իջեանին անհոգութիւն ընելով իր շուրջը եղողներուն փրկութեան խօսքը չէր խօսած:

Ու տակաւին Ուէսլի ինքը չէր ստացած փրկութեան այդ մեծ խօսքը ինքնիրեն համար «քու մեղքերդ քեզի ներուած են»: Այս վիճակը զայն կրկին խոռվեցուց ու ինք Պէօլէրի նորէն հարցուց, «Պէտք չէ՞ արդեօք որ ուրիշներուն խօսելէ ետ կենամ»:

Պէօլէր պատասխանեց, «Ոչ, Աստուծոյ քեզի տրուած տաղանդը հոգին մէջ մի պահեր»: Այս

նոր խոտովութիւնը ու նոր քաջաւերութիւնը Ուէսլիի եռանդը կրկնապատկեց. ու այս անգամ ուրիշներու ներկայութեան իր եղբօր Չարլզ Ուէսլիի խօսեցաւ «միայն հաւատքով եղած փրկութեան եւ անոր պտուղներու մասին»: Եղբայրը շատ բարկացաւ ու իրեն ըսաւ, «Ձեռ գիտեր թէ ինչ մեծ աւերներ կը գործես այդպէս խօսելով»: Ուէսլի կ'ըսէ, «Անշուշտ Աստուած հաճեցաւ այդ պահուն արծարծել կրակ մը, որ վստահ եմ բընաւ պիտի չմարի»:

Այս խօսակցութիւնը 1738 Ապր. 25ին էր. յաջորդ օրերուն Պէօլէր տեանուեցաւ նաեւ Չարլզ Ուէսլիի հետ. ամիս մը չանցած Մայիս 24ին ճան Ուէսլի լուր առաւ թէ իր եղբայրը փրկութեան վստահութեան տիրացած էր: Աստուած ալիւս բաւ սեպեց նաեւ իր ծառային խնդրելը, փնտռելը եւ դուռը դարնելը, եւ իր եղբօր փրկութիւնը վստահելէն ճիշդ երեք օրեր յետոյ — երեք օրեր որոնց ընթացքին նա շարունակական տխրութեան եւ թախիծի մէջ էր — 1738 Մայիս 24ի Չորեքշաբթի օրը ճան Ուէսլի ինքն ալ վերջապէս դտաւ իր հոգւոյն յաւիտենական փրկութիւնը: Ահա թէ նա ինչպէս կը նկարագրէ այդ օրուան պատահարը:

Մայիս 24 — «Այս առաւօտ կարծեմ ժամը 5ն էր երբ Նոր Կտակարանս բանալով սա խօսքերը կարդացի, «Ամենամեծ ու պատուական խոստմունքներ տրուած են մեզի, որպէսզի անոնցմով Աստուածային բնութեան հաղորդ ըլլաք» (Ա. Պետ. Ա. 4): Ծիշդ դուրս ելլելու պահուս՝ նորէն բացի գայն եւ սա խօսքերուն հանդիպեցայ, «Աստուծոյ թաղաւորութենէն հեռու չես», (Մարկ. ԺԲ. 34): Կէսօրէն յետոյ Սբ. Պօղոսի մայր եկեղեցին երթալու էի: Երգուած Սաղմոսը հետեւեալն էր. —

«Նորունկ տեղերէն Քեզի կանչեցի ով Տէր:

Ով Տէր, իմ ձայնս լսէ.

Քու աւանջներդ թող մտիկ ընեն իմ

աղօթքիս ձայնը:

Ով Տէր, եթէ անօրէնութիւնները յիշելու

ըլլաս

Տէր, ո՞վ կրնայ կենալ,

Բայց Քու քովդ է թողութիւնը

Որպէսզի Քեզմէ վախնան:

Իսրայէլ թող Տէրօջը լուսայ

Վասնզի Տէրօջը քով ողորմութիւն կայ.

Ու Անոր քով շատ փրկութիւն կայ.

Եւ Ասիկա պիտի փրկէ Իսրայէլը

Իր բոլոր անօրէնութիւններէն,»:

Երեկոյեան բոլորովին դժկամակութեամբ մտաւեաններու պզտիկ ժողովին գացի: Հոն Լուտերի Հոգմայեցւոց թղթոյն վրայ պրած յառաջաբանէն մաս մը կը կարդալին: Ժամը 9ին քառորդ մնացած՝ մինչ ընթերցումը կը նկարագրէր այն փոփոխութիւնը որ Աստուած մարդուս սրտին մէջ կը կատարէ Քրիստոսով եղած հաւատքով, յանկարծ զգացի որ սիրտս տարօրինակ կերպով կը տաքնար: Զգացի թէ փրկութեանս համար Քրիստոսի վստահեցայ, միայն Քրիստոսի. ինծի վստահութիւն տրուեցաւ թէ նա իմ, նոյնիսկ իմ մեղքերս ներեց ու ջնջեց. եւ զի՞ փրկեց մեղքի ու մահուան օրէնքէն:

Անմիջապէս սկսայ բոլոր ուժովս աղօթել անոնց համար որոնք մասնաւոր կերպով ինծի չարութիւն ըրած եւ զիս չարչարելով հալածած էին: Յետոյ հոն եղող ամենուն առջեւ համարձակօրէն վկայեցի ինչ որ հիմա իմ սրտիս մէջ կը զգայի: Շատ չանցած թշնամին մօտեցաւ եւ ուղեց որոմ ցանել: «Ասիկա չէ այն փրկող հաւատքը, ասիկա չկրնար ըլլալ, քանզի ո՞ւր է, դուն ուրախութիւն չ'ստացար»: Այն ատեն Տէրը ինձ սորվեցուց թէ երբ մեր փրկութեան Առաջնորդին վրայ հաւատք կը դնենք՝ մեզի անհրաժեշտ եղածը խաղաղութիւն եւ մեղքի վրայ յաղթանակ է. բայց թէ գալով ուրախութեան յափըշտակիչ յուզումներուն՝ որ մասնաւոր խորունկ ողբէ անցնելով փրկութեան հասնողներ կ'ունենան, Աստուած ոմանց անմիջապէս, ոմանց ալ կ'ուշացնէ ըստ իր խորհուրդներուն ու կամքին:

Տուն վերադառնալէս յետոյ փորձութիւններ տեղացիին վրաս, բայց ես ամէն անգամին Աստուծոյ կանչեցի ու անոնք անհետացան:

Մայիս 25ի առաւօտուն արթնցայ շրթունքներուս վրայ «Յիսուս իմ Տէրս» բառերով: Ես տեսայ որ ամբողջ օրը իմ աչքերս անոր վրայ հաստատուած էին եւ իմ հոգիս անդադար անոր կ'սպասէր: Թշնամին նորէն վախ մը ներշնչեց. «Եթէ կը հաւատաս՝ ինչո՞ւ աւելի զգալի փոփոխութիւն մը չունիս: Ես պատասխանեցի, (թէ եւ ես չէի պատասխանողը) չեմ գիտեր այդ. բայց մէկ բան գիտեմ թէ «ես հիմա Աստուծոյ հետ խաղաղութիւն ունիմ. այսօր մեղք չեմ գործեր եւ Յիսուս իմ Տէրս արգիլած է ինձ վաղուան համար հոգ ընել»:

Հրաշալի զուգադիպութեամբ մը Ուէսլիի փրկութեան վստահութիւն տուող հատուածը Պօղոս առաքեալի գրութենէն եւ այդ գրութեան Լուտերի մեկնութենէն եղաւ: Կարծես Աստուած կ'ուզէր ԺԸ. դարու արթնութիւնը առաքելական

նախնական եկեղեցւոյն եւ ժՉ. դարու բարեկարգութեան շղթայել:

Ուէսլի իր օրհնեալ փորձառութենէն անմիջապէս յետոյ երեք ամսուան ճամբորդութիւն մը ըրաւ դէպի Գերմանիա, մորաւեան եկեղեցիները իրենց ծնունդ առած տեղւոյն վրայ տեսնելու: Նա գնաց մինչեւ Հերնհոլթ եւ վայելեց հոն տեղի պատուելիին Քրիսթիան Տավիլի նման սուրբի մը ընկերակցութիւնն ու քարոզները: Ինչ որ իր վրայ ամենէն խորունկ տպաւորութիւն ըրաւ Հերնհոլթի քրիստոնեաներուն քրիստոսի հոգիին տիրացած ըլլալն էր: «Շատ պիտի փափաքէի իմ ամբողջ կեանքս հ.ն անցնել» կ'ըսէ նա, «բայց իմ Տէրս զի» Իր այգիին ուրիշ մասերուն մէջ կը կանչէր՝ ու ես ստիպուեցայ այս երջանիկ երկրէն բաժնուիլ»:

Ուէսլիի Գերմանիայէն վերադարձէն քիչ յետոյ ձօրճ Հոլայթֆիլտ ալ ձօրճիայէն վերադարձաւ, ուր ինք ալ Ուէսլիի նման միսիոնարութեան գացած էր:

Այսպէս ժԸ. դարու սկիզբները ճան Ուէսլի, Չարլզ Ուէսլի եւ ձօրճ Հոլայթֆիլտ ինքզինքնին միացած գտան փրկութեան օրհնեալ փորձառութիւնը ունենալէ յետոյ: «Այս միութիւնը» կը զրէ ճան Ուէսլի, «ճշմարիտ Պենտեկոստէ մը եղաւ»: Առաքելական կրակը անոնց մէջ բռնողնկած էր. այլեւս անոնց միակ փափաքն էր այդ կրակը տարածել ամէն տեղ, եւ շատ մը պատմաբաններ այս շրջանէն կը հաշուեն Անգլիոյ հոգեւոր արթնութեան սկզբնաւորութիւնը: Ազատ. թարգ Վ. Ս.

ՊԱՏԱՆԵԱՅ

ՏԻՊԱՐ ԴԵՄՔԵՐ

—

Մարդկային նկարագիրներու շինութեան մէջ ընդհանրապէս մեծ դեր ունեցած է մեծ մարդոց կեանքի ուսումնասիրութիւնը: Մարդո նմանցնելու ձիրքովը մեծապէս օժտուած է, այնպէս որ միշտ իր սիրած անձին՝ հայր, մայր, ուսուցիչ եւն. մէկ սիրած յատկութիւնը կ'օրինակէ: Ու այս ընդօրինակումը ընդհանրապէս կը մնայ մինչեւ իր կեանքին վերջը: Այս պատճառով Պօղոս առաքեալ ալ կ'ըսէ, «Ինծի նմանող եղէք եղբայրներ» (Փիլ. Գ. 17): Ու Եբրայեցոց զրքին

ԺԱ. զլիւսն մէջ հաւատոյ հերոսներուն կարճ պատմականն ընելէ յետոյ է որ հեղինակը կ'ըսէ «Մենք որ այսքան վկաներու բազմութիւնը մեր բոլորտիքը պատած ունինք», այսինքն անոնք որ մեզմէ առաջ ապրեցան պացին, փառքի հասան, հիմա իրենց օրինակովը մեր առջեւն են եւ իրենք եւս բարձր օթեակներու մէջ նստած մեր վազքը կը դիտեն, միեւնոյն ժամանակ նշան կ'ընեն մեզ քաջալերելու. կ'ըսէ նաեւ «Յիշեցէք ձեր առաջնորդները որոնք Աստուծոյ խօսքը ձեզի խօսեցան, եւ անոնց վարժուելին վախճանին նայելով իրենց հաւատքին նմանող եղէք» Եբր. ԺԳ. 7:

Արդ, զիտնալով աղապէս, յարմար սեպեցինք Ձեզի սիրելի պատանիներուդ իւրաքանչիւր ամիս պատմական բարձր նկարագիր մը և տիպար դէմք մը ներկայացնել, աղօթելով որ Տէր Յիսուս անոնց միջոցով ալ Ձեզի հետ խօսի և Ձեր նկարագրի շինութեան գործին մէջ այս տողերը գործածէ:

Յիսուսի նպատակն է զՁեզ Իրեն նմանցնել ու այդ գործին մէջ կրնայ նաեւ իր կերտած տիպարները գործածել:

Այս տիպարները ընդհանրապէս Քրիստոսի քանրանկարներն են: Անոնցմէ մին է Յովսէփ Գեղեցիկ: Այո, գեղեցիկ դէմքով, բայց աւելի եւս գեղեցիկ նկարագրով, սուրբ տիպար մը:

Անոր կեանքին ընդարձակ նկարագրութիւնը կը տեսնենք Ծննդ. Լէ. Լիթ.-Ծ. զլուխներուն մէջ: Իր պատանի հասակին, երբ նկարագրը արդէն կերտուելու վրայ էր, Յովսէփի կեանքի պարագաները այնքան ալ նպատաւոր չէին: Յովսէփ զրկուած էր մօրենական փափուկ խնամոց տաք շունչէն, քանզի մայրը շաքտոնց մեռած ըլլալով, նա իր հօրը՝ Յակոբի միւս կիներուն խնամքին յանձնուած էր ու որպէս անմիջական ընկեր ունէր Դանը, Նեփթաղիմը, Գաթն ու Ասերը և միւս եղբայրները. միջավայր մը, որ երբեք լաւ բան չէր խոստանար:

Բայց Յովսէփ մանկութենէն ի վեր մասնաւոր մտերմութիւն մը ունէր իր հօրը հետ, որու հետ ամէն բան կը խօսէր, նոյնիսկ Աստուծապաշտական ու հոգեւոր բարձր նիւթերու մասին եւ հակառակ տարիքներու անհամեմատ տարբերութեան, անոնք ճշմարիտ մտերմներ էին, նաեւ մտերիմ էին Աստուծոյ հետ, որու առջեւ կը դէնէին իրենց տան բոլոր անդամները, մանաւանդ տղաքը, Ռուբէնէն սկսեալ, քանզի անոնց չար վարքը երկուքին ալ սրտի մեծ ցաւ էր:

Այսպէս Յովսէփ մանկութենէն մտերմացաւ

Աստուծոյ հետ, վստահեցաւ Անոր, յանձնուեցաւ եւ Անոր մինչեւ վերջը հնազանդելու խօսք տը-
ւաւ: Տէր Աստուած բռնեց զայն իր խոստման
վրայ եւ անոր կեանքը իր ձեռքն առաւ: Յովսէփ
կ'զգար եւ գիտէր թէ Տէրը իրեն հետ էր: Շատ
չանցած պարագաները եւ եղբայրներուն ատե-
լութիւնը զինք մինչեւ Եգիպտոս նետեցին: Յով-
սէփ կը գտնէր ինքզինքը անել փողոցի մը մէջ
բայց ճիշդ այդ տեղերուն մէջ էր որ նա հաւատա-
քով եւ կատարեալ հնազանդութեամբ իր ճամ-
բան կը շարունակէր անկէ դուրս ելլելու: Նա
զժուարթութիւններ չա'տ կրեց. անարգուեցաւ
նոյնիսկ սուրբ նկարագիր մը ունենալուն հա-
մար նա պատժուեցաւ եւ ո'չ կարճ ժամանակ
մը, բայց նա բնաւ չտարակուսեցաւ իր Աստու-
ծոյն վրայ եւ ժամանակաւոր ու տեսանելի բա-
ներով չազդուեցաւ, մինչեւ որ Աստուծոյ բարձ-
րացնելու ժամանակը հասաւ:

Աստուած զինքը թագաւոր ըլլալու որոշած
էր, անոր յայտնած էր երազի միջոցաւ, բայց
այդ թագաւորութեան բարձր գահին հասնելու
համար, հարկ էր իրեն բանտին զնաւաններէն
անցնիլ. այո՛, բանտը իրեն յայտնուած չէր թե-
րեւ, բայց գիտէր թէ Աստուած իր խոստումնե-
րուն վրայ անյողդողդ է եւ զինքը չմոռնար: Ի-
րեն համար կը մնար միայն սպասել մը, մինչեւ
որ երկնաւոր Հայրը ձեռքը երկնցնէր բարձրաց-
նելու համար. ուստի կը համբերէր:

Ժամանակը եկաւ եւ Յովսէփ բարձրացաւ,
թագաւոր եղաւ եւ կերակրեց միլիոնաւոր ժո-
ղովուրդներ: Եգիպտոսի հայրը եղաւ, ինչպէս
նաեւ իր հօրենական տան ու բոլոր Իսրայէլի:

Ով պատանի, կեանքիդ շաւիղին վրայ առան-
ձին ես թերեւս, ունիս գաղտնիքներ, զժուարթու-
թիւններ, գորոնք մէկու մըն ալ չես կրնար վա-
տահիլ, կ'ուզես ըլլալ բան մը, ըլլալ ինչ որ քու
իրաւունքդ է, բայց որպէսզի կարենաս ճիշդ քե-
զի համար որոշած նպատակին հասնիլ, կը թե-
լադրեմ որ անմիջական յարաբերութեան մըտ-
նես Աստուծոյ հետ: Անիկա բոլոր մտերիմներէն
աւելի կը մտերմանայ քեզի հետ, կրնաս ամէն
բան ըսել Անոր եւ Անկէ ուզողութիւն առնել: Ա-
նիկա բնաւ չպիտի խաբէ զքեզ: Մտածէ հետեւե-
ալ վկայութեանց մասին. — «Երկինք ու երկիր
պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ պիտի
չանցնին»: «Տէրոջը յանձնէ քու ճամբադ եւ Անոր
յուսա եւ Անիկա պիտի կատարէ» Սաղ. ԼԷ. 5:
«Տէրոջը բոլոր ճամբաները ողորմութիւն ու ճշ-
մարտութիւն են իր ուխտը ու վկայութիւնները
պահօղներուն» Սաղ. ԻԵ. 10:

ՄԱՆԿԱՆՅ ՍԻՒՆԱԿ

ԳՐՈՒԱԳՆԵՐ ՔՈՅՐ ԱՊԻԿԱՅԻԼԻ ԿԵԱՆՔԷՆ

օօօ

ԻՐ ԱՌԱՋԻՆ ԱՂՕԹՔԸ

Աստուածապաշտ ընտանիքի մը ամենապըզ-
տիկ զաւակն էր Ապիկայիլ: Իր մանկութենէն Ս.
Գիրքը մտիկ ընելու վարժուած եւ շատ պզտիկ
հասակէն փրկուած էր:

Իր հայրը ճօրճ Միւլլըրի (Այդ գօրաւոր հա-
ւատքի տէր ու Աշիի ճառն իմէջ գտնուող նըշա-
նաւոր որբանոցին հիմնադրին) բարեկամն էր:

Ապիկայիլ երբ երեք տարեկան էր, իր առա-
ջին մանկական եւ ճշմարիտ հաւատքի աղօթքը
արտասանեց ճօրճ Միւլլըրի ծունկերուն վրայ,
երբ օր մը անոր տունն էր: Իր մանկական թո-
թով լեզուովը ըսաւ, «Ջօրժ Մուլլըր, տուգէի որ
Աստուած իմ աղօթքներուն ալ պատասխանէր
ինչպէս որ թուող տընէ»:

— Ան կ'ուզէ պատասխանել, ըսաւ, ու շուտով
ս'զտիկը իր ծունկերուն վրայ առնելով կրկնեց
այն աստուածային խոստումը, թէ «Ինչ բան որ
աղօթքով կը խնդրէք, հաւատացէք թէ պիտի
առնէք եւ պիտի ըլլայ ձեզի» Մարկ. ԺԱ. 24:

— Է՛հ, լաւ աղջիկս, ի՞նչ էր որ կ'ուզէիր խնդ-
րել Աստուծմէ:

— Բուրդ, պատասխանեց:

Այն ատեն միացնելով պզտիկին ձեռքերը, ը-
տաւ, «Հիմա կրկնէ ի՞նչ որ կ'ըսեմ»:

«Եթէ հաճիս ով Աստուած, քիչ մը բուրդ դըր-
կէ Ապիին»:

— Բարի Աստուած, եթէ հաճիս Ապին քիչ
մը բուրդ դրկէ, կրկնեց մանուկը: Գետինը ցատ-
կելով եւ բոլորովին զոհ սրտով մը իր խաղին
վազելով, բայց յանկարծ ետ եկաւ, նորէն ճօրճ
Միւլլըրի առջեւ ծնրադրեց «Եթէ հաճիս բարի
Աստուած, պունաւոր բուրդ դրկէ», մրմնջելով իր
խաղին վերադարձաւ:

Շատ մեծ եղաւ իր ուրախութիւնը հետեւեալ
առտուն, երբ սուրհանդակը անոր զանազան գոյ-
ներով պզտիկ կծիկներու լեցուն բուրդի տուփ
մը բերաւ: Իր քոյրերուն ուսուցչուհին բարե-
կամներու այցելութեան գացած ատեն այս բուր-
դի նմուշները տեսած էր եւ խորհելով որ Ապիի
հաճոյք կրնայ պատճառել, անոր դրկած էր:
Պզտիկ աղջկան սիրտը ուրախութեամբ լեցաւ
ու շնորհակալ եղաւ իր աղօթքին պատասխան-

ուելու՛ն ու իր ժանկական հաւատքը գորացաւ:

Ապի պատմեց այս պատահարը իր մեծ բարեկամին Ճօրճ Միւլըրի: Այս պատեհութեամբ ան՝ Ապիի սորվեցուց աղօթքի հետ յարաբերութիւն ունեցող համարը, «Իսկ դուն երբ աղօթք կ'ընես մտի՛ր քու ներքին սենեակդ ու դուռդ գոցէ, եւ աղօթք ըրէ՛ քու Հօրդ որ գաղտուկ տեղ կը գտնուի, եւ քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում պիտի ընէ»:

Ապիի ծնողքը Ս. Գիրքը ամէն օր կը կարդային ու կը գործադրէին: Ապի անոնցմէ սորվեցաւ իրականապէս սիրել Յիսուսը ու աղօթել Անոր, զԱյն դաւանելէն շատ աւելի առաջ:

Առտու մը շատ կանոնաւոր, երբ որբանոցին պարտէզը կը խաղար, Ճօրճ Միւլըր անոր ձեռքէն բռնեց ըսելով, «Եկու՛ն տես ինչ որ մեր Հայրը պիտի ընէ», եւ զայն տարաւ մեծ ճաշասրահ մը, ուր կային շատ մը պնակներ եւ զաւաթներ որբանոց պարտէզէն. կերակուրի պահարանին մէջ բան մը չկար ոչ ալ դրամարկը՝ դրամ: Որբերը ոտքի կանգնած նախաճաշի կ'ուպակէին: Ճօրճ Միւլըր ըսաւ անոնց, «Տղաք դիտէ՛ք որ պէտք է ժամանակին դպրոցը ըլլաք», յետոյ ձեռքերը վեր վերցնելով այսպէս աղօթեց, «Սիրելի Հայր, շնորհակալ ենք մեզի տալիք ուտելիքիդ համար»:

Դուռը կը զարնուի, հացազործն է, «Պր. Միւլըր», ըսաւ ան, «այս գիշեր չկրցայ քնանալ, չեմ գիտեր ինչ կար, սակայն զգացի որ ձեր այս առաւօտեան նախաճաշին հացը կը պակսի, եւ Տէրը կ'ուզէ որ ես պատրաստեմ զայն, այսպէս ժամը Զին ելայ եւ ահաւասիկ հացերը»:

Ճօրճ Միւլըր իր սրտաբուլիս շնորհակալութիւնը առանձնութեան մէջ Աստուծոյ յայտնելէ վերջ եկաւ որբերուն ու ըսաւ, «Տղաքս, շնորհակալ ըլլանք որ ոչ միայն մեզի հաց զրկեց Աստուած, այլ նոյնիսկ թարմ հացեր, զոր քիչ անգամ կ'ունենանք: Հագիւ թէ այդ խօսքերը ըսած էր՝ դուռը նորէն զարնուցաւ:

Կաթնալիւն մըն էր, որուն կառքը կտարեր էր որբանոցին դռանը առջեւէն անցած ատեն, ու ինք կը փափաքէր այս թարմ կաթը որբերուն նուիրել իր կտրած կառքը պարպելու ու նորոգելու համար:

Այս դէպքերը խորունկ տպաւորութիւն մը ձգեցին պզտիկ Ապիին վրայ, սորվելու թէ ինչպէս զոհութիւնով մէկտեղ եղած հաւատքով աղօթք մը կը պատասխանուի եւ թէ Տէրը իր գաւազներուն ամէն պէտքերը իր ժամանակին կը հոգայ: Այո՛ Տէրը նոյնպէս, քայլ առ քայլ կ'առաջնորդէր այսպիսի տարիքով և փորձառութեամբ

պզտիկ աղջիկ մը, նոյնիսկ դժուարութիւններէ անցնելով զայն:

Ապի երբ հինգ տարեկան էր, գիշեր մը մայրը ասնքան արիւն կորսնցուց, որ կարծեցին թէ անոր վերջին ժամն էր: Իր մեծ քոյրերէն մէկը վազեց բերելու պզտիկ Ապին, որպէսզի մօրմէն փր վերջին համբոյրը ընդունի: Երբ իր քոյրը ըսաւ թէ մայրը կը մեռնէր, եւ ինք պէտք էր աճապարեր, պզտիկը սկսաւ լալ ու ըսել, «Պէտք չէ որ մայրս մեռնի, ո՛չ չպիտի մեռնի ան»:

Աստիճաններէն իջնելով պզտիկ խցիկի մը դռան առջեւէն կ'անցնէին, Ապի իր քրոջմէն խնդրեց մէկ երկու րոպէի համար հոն մտնել, քոյրն ալ «աճապարէ» ըսելով զայն գիւրկէն վար դրաւ: Ապի ներս մտաւ ու ծնրադրելով այսպէս աղօթեց, «Սիրելի Փրկիչ, ներքին սենեակը մտայ ու դուռը գոցեցի, եթէ հաճիս սիրելի Փրկիչ, մի թողուր որ մայրիկս մեռնի, մինչեւ որ ես Քեզ ու Քու անունդ դաւանիմ»: Սիրտը մեծ խաղաղութիւնով լեցուած էր, դէպի մօրը վազեց ըսելով, «Մայրիկս պիտի չմեռնի»: Քոյրը զայն իր մօրը բազկացը մէջ դրաւ: Բժիշկը զարմացաւ երբ գտաւ հիւանդը խորունկ քունի մը մէջ ու մանուկը իր բազուկներուն վրայ: Երբնէ արթնցաւ, արդէն վտանգը անցած էր: (Շար.)

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

○○○○○ — ○○○○○

ԲԵԹՍԷԻԱ.— Հոգեւոր ուսումնասիրութիւն մը, որուն հեղինակն է Մր. Օսթին Սփարքս, խմբագրութեանս ծանօթ սիրելի եղբայր մը: Զայն հրատարակեցինք հայերէն լեզուով, եւ որովհետեւ «Բանբեր» անցեալ տարի մէկ ամիս ուշ մը՝ նացած ըլլալով մինչեւ հիմա միշտ մէկ ամիս ուշ լոյս տեսաւ, յարմար սեպեցինք այս թիւին հետ միասին մէկ օրինակ «Բեթանիա» ղրկել ձրիօրէն եւ զայն հաշուել որպէս մէկ թիւ «Բանբեր» կարենալ վաստակելու անցեալ կորսնցուցած ժամանակը եւ թերթը կրկին ժամանակին հրատարակել: Աղօթքով պատրաստած ենք զայն և կը հաւատանք թէ շատերուն — բոլոր ընթերցողներուն օգտակար պիտի ըլլայ:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St - Savournin Marseille

ՀԱՅ ԱՒԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՉ

(Նաբանախի աղօթածողներու մասին հարցնել տեղոյն վրայ):

Ս ԱՐՍԷՅԼ—Հովիւ' (վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպ-
րոց մանկանց 11 Rue de l'Eclipse.

Շաբաթափոխ ժողովներ Սէն Լուի, Կարտանի,
Սէն Ժիւլիէնի, Սէն Սեբաստիանի, Սէն Մարկրի-
թի, Սէն Ժերմի Պուվար Օտօի մէջ):

Սէն Լուի.—Քարոզիչ Պրն. Վահան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:

9. 30ին Ս. գրական ուսումնա.
16 ին քարոզածողով:

Սէն թ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՌԱՍ.— Քարոզիչ' Պրն. Ս. Պագգալեան,
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont.d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

Սէն Փիէթ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՅՆ ԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց
14ին քարոզ եւ աղօթածողով

.....

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ' Բրոֆ. Գ. Գ. Խայիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս
եկեղեցիին մէջ

ԴՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

.....

ԼՐՕՆ— Հովիւ' Պատ. Ժ. Պարսումեան,
18, Rue du Dr. Rebat 1:

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւնը
ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

.....

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ—Քարոզիչ Պրն. Ի. Աբրահամեան
2, Place de la Pareille.

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով
57 Rue de la République,

17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիսի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահ

.....

ԲԱՐԻՉ— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պատարեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 2°

Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին

37 Rue Tournefort Paris 5°

Metro Mouhe Aut. K6

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդա-
ֆրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար-

դութեաց ֆրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Գ. կիրակիները Սբ. Գրոց
մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

59 Ave. du Bas Meudon Ile St Germain
Issy les Moulinaux

ԱԼՖՕՐՎԻԼ.— Հովիւ' վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին Կիր. դաս

ԲԱՅՈՒԱԾ Է

1935 ՏԱՐՈՒԱՆ «ԲԱՆԲԵՐ» ԱՄՍԱԹԵՐԹԻՆ

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ֆրանսայի համար

Հայերէն լեզուով	20 ֆր.
թուրք էերնլեզուով	10 ֆր.
երկուքը միասին	25 ֆր.

Սուրիա

Հայերէն լեզուով	15 ֆր.
թուրքերէն լեզուով	7 ֆր.
երկուքը սիասին	20 ֆր.

Ասերիկա

Հայերէն լեզուով	1 տուլ. 25 ս.
թուրքերէն լեզուով	60 ս.
երկուքը միասին	1 տուլ. 75 ս.

Պալքանեան եւ ուրիշ երկիրներ

Հայերէն լեզուով	20 ֆր.
թուրքերէն լեզուով	10 ֆր.
երկուքը միասին	25 ֆր.